Եվրամիությունը ճգնաժամի մեջ է. պետք է ինքը գոյատեւի եւ խուսափի քայքայվելուց: Ակնհայտ է, որ նոր երկրների ինտեգրման նպատակը չկա: ԵՄ-ի՝ Հայաստանին տված խոստումը գայթակղություն է. ծառայում է միայն Ռուսաստանի դեմ պայքարին, քանի որ Եվրոպան փորձում է պահպանել ԵՄ համախմբվածությունը՝ ընդհանուր թշնամու դեմ:

Կարդացեք՝ էջ 4

Գազի գնի փոփոխությունը Հայաստանի տնտեսության համար ամենազգայուն հարցերից է, այն անմիջական ազդեցություն ունի թե՛ բնակչության սոցիալական վիճակի, թե՛ արտադրական ծախսերի վրա: Գազի թանկացումը սովորաբար փոխանցվում է նաեւ էլեկտրաէներգիայի, տրանսպորտի, գյուղատնտեսության եւ մի շարք ապրանքների ինքնարժեքին:

Կարդացեք՝ էջ 6

Հմուտ մանիպուլյատորի, շարունակական ստախոսության, հարազատներին միմյանց դեմ լարելու, համախոհներին գժտեցնելու գործում Փաշինյանը համաշխարհային պատմության մեջ ոչ միայն առաջատար է, այլեւ՝ միակն ու անկրկնելին: Նրա ստերի եւ մանիպուլյացիաների 5 տոկոսը եթե Գեբելսն արած լիներ, ամոթից գետինը մտած կլիներ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 89 (4224), 4 հունիս, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ի՝ Կոտայքում անցկացրած քարոզարշավից հետո ԵԿՄ նախագահ, ՔՊ պատգամավորության թեկնածու Սասուն Միքայելյանի որդին՝ Մեխակ Միքայելյանը, ըստ լուրերի, մարզում ուղղակի տեռոր է սկսել: Ասում են՝ Փաշինյանը գոհ չի մնացել մարզային այցից ու իր տպավորությունները կիսել է Սասուն Միքայելյանի հետ, որից հետո Միքայելյաններն ընտանյոք հանդերձ որոշել են էլ ավելի մեծ եռանդով գործի անցնել եւ Փաշինյանին խոստացել են ընտրություններին աննախադեպ թվեր տալ: Մարզի մեր աղբյուրի փոխանցմամբ, հատկապես ակտիվ է Մեխակ Միքայելյանը: Եթե Սասունի՝ Հրազդանի համայնքապետ որդին՝ Սեւակ Միքայելյանն աշխատում է համայնքապետարանի ենթակայությամբ գործող հիմնարկների աշխատակազմերի ուղղությամբ՝ դպրոցներ, մանկապարտեզներ եւ այլն, ապա Մեխակի թիրախը տնտեսվարողներն են, մանր ու միջին բիզնեսի ներկայացուցիչները: Նա անձնական զրույցներ է ունենում նրանց հետ, սպառնում, որ եթե մեզ հետ չեք, լավ չի լինի: Մեխակ Միքայելյանը եւս բիզնեսով է զբաղվում՝ իշխանափոխությունից հետո նախկիններից խլած գազալցակայան է աշխատեցնում: Ասում են՝ Ծաղկաձորում մի շարք տարածքներ է ձեռք բերել: Բայց ընտանիքը մտավախություն ունի, որ անգամ Հրազդանում կարող են պարտվել ընդդիմությանը, քանի որ քաղաքի հեղինակություններն անգամ իշխանության հետ չեն:

Նիկոլ Փաշինյանի կողմից 10 հազար դրամով կենսաթոշակները բարձրացնելու որոշումից հետո Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն էլ հայտարարեց, թե որոշել է քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզների աշխատակիցների աշխատավարձերը բարձրացնել: Մեզ հետ զրույցում Երեւանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ Մարգարիտա Խաչատրյանն ասաց, որ արդեն հունիսից մանկապարտեզների աշխատակիցները բարձր աշխատավարձ են ստանալու: «Բոլորինը նույն չափով է բարձրացել, բայց պետք է շեշտել, որ աշխատակիցները՝ ըստ հաստիքների, տարբեր աշխատավարձեր են ստանում: Այսինքն, բարձրացել է համամասնորեն, նախորդ անգամ՝ 2023-ին, բարձրացվեց ըստ զբաղեցրած հաստիքների՝ տարբեր, ամենաշատը բարձրացել էր դաստիարակներինը՝ 31 տոկոս, իսկ ամենաքիչը ումը որ բարձրացել էր, 15 տոկոս էր բարձրացել: Իսկ այս անգամ բոլորինը բարձրացել է աշխատավարձի 20 տոկոսի չափով»:

Կորցրել է մեր վստահությունը

Հանրային վստահությունը շահելը բարդ է, իսկ կորցնելը՝ շատ դյուրին: Երբ դու հարյուր հազարների առաջ ինչ-որ խոստում ես տալիս, ու ամիսներ անց պարզվում է, որ ուղղակի խաբել ես մարդկանց, ինչո՞ւ պետք է մարդիկ դրանից հետո հավատան քո խոսքին, վստահեն քեզ: Դա նշանակում է, որ դու արժանի չես քո բարձր պաշտոնին: Իսկ նման իրավիճակներ այս 8 տարում անթիվ-անհամար են եղել: Վստահ եմ, որ ամեն մեկդ հիշում եք տարբեր դրվագներ, երբ Նիկոլ Փաշինյանը բարձր ամբիոնից, ի լուր աշխարհի, հայտարարություն է արել, ապա որոշ ժամանակ անց դրա ճիշտ հակառակը պնդել: Օրինակ, ասում էր, որ չի կարող այնպես լինել, որ մի օր արթնանաք ու իմանաք, որ ես ինչ-որ կարեւոր հարց եմ լուծել, ասենք՝ Արցախի հարցը: Խոստանում էր, որ գալու է Հանրապետության հրապարակ, հավաքելու է ժողովրդին եւ նրա հետ քննարկելու է ցանկացած քայլ, որոշում, որի շահառուն հայ մարդն է, ՀՀ քաղաքացին: 8 տարում մենք հազարավոր նման դեպքեր ենք հիշում, երբ Հայաստանի ու հայ ժողովրդի համար ճակատագրական որոշումները կայացվել են միանձնյա, եւ անգամ իր ՔՊ-ական թիմը դրանց կայացմանը չի մասնակցել: Բայց ամենամերժելի բանը, որ արել է այս իշխանությունը, մեր ազգի ու մեր պետության կորուստները որպես ձեռքբերումներ, պարտությունը որպես հաղթանակ, ինքնիշխանության ոչնչացումը որպես ինքնիշխանության հաղթանակ ներկայացնելն է եւ օտար պետություններից, մեր թշնամիներից եկող հրահանգները, նրանց ցանկությունները սիրահոժար, մի բան էլ ավելցուկով ու առաջանցիկ կատարելը: Վստահ եմ, որ Ալիեւն ու Էրդողանն ամեն անգամ տարակուսում են, թե ինչու է Փաշինյանն իրենց պահանջների կատարման հարցում նման ջերմեռանդություն ցուցաբերում եւ ամեն անգամ «հաճելի սյուրպրիզներ» մատուցում իրենց, երբ դրա կարիքը բոլորովին չկա:

Նիկոլ Փաշինյանի իշխանության ներկայացուցիչների ու համակիրների մեծ մասը, սահմանամերձ Ոսկեպարից բացի, տներ ունի նաեւ Իջեւանում, Երեւանում, Աբովյանում, Ռուսաստանում, այլ վայրերում: Նրանք այնքան էլ չեն անհանգստանում, որ ԽՍՀՄ-ի ինչ-որ շրջանում անկլավ հանդիսացած, նախկինում ադրբեջանաբնակ Վերին Ոսկեպարի տարածքը Նիկոլ Փաշինյանն Ադրբեջանին կհանձնի, եւ այդ դեպքում կյանքը Ոսկեպարում կվատթարանա կամ անհնարին կդառնա, ու իրենք ստիպված կլինեն հեռանալ հայրենի գյուղից: Նրանք ապրելու այլ հնարավորություններ ունեն եւ առանձնապես տարբերություն չեն տեսնում՝ Տավուշո՞ւմ կապրեն, թե՞ Կրասնոդարում կամ Աբովյանում:

ՋԵՐՄՈՑԱՏԵՐԵՐԸ ՆԱԽԱՐԱՐԻ ՄՈՏ ԲՈՒՆՏ ԵՆ ԱՐԵԼ

Անցած շաբաթ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հանդիպել էր խոշոր ջերմոցային տնտեսությունների ներկայացուցիչների հետ եւ քննարկել առկա խնդիրները: Չնայած պաշտոնական հաղորդագրությունը բավականին զուսպ է, եւ հպանցիկ անդրադարձ կա ջերմոցատերերի առջեւ ծառացած մարտահրավերներին, նշվում է, թե անդրադարձ է կատարվել «արտահանման դիվերսիֆիկացիային»: Սակայն, մեր տեղեկություններով, բավականին թեժ քննարկում է ծավալվել, բայց այդպես էլ նախարարը չի կարողացել տնտեսվարողներին լուծում առաջարկել: Հիշեցնենք. Ռուսաստանը մայիսի 22-ից սահմանափակել է Հայաստանից մի շարք ապրանքների, այդ թվում՝ գյուղմթերքի, ձկնատեսակների, «Ջերմուկի», կոնյակի եւ ծաղիկների ներկրումը Ռուսաստան: Մեզ պատմեցին, որ Պապոյանը ջերմոցատերերին առաջարկել է օգնություն, ավելի ճիշտ՝ ասել է, թե ինչով կարող է պետությունն օգնել, որ նրանք շատ չտուժեն, սակայն ջերմոցատերերը միաբերան պնդել են, որ իրենց ամենամեծ խնդիրը շուկան է, եվրոպական շուկա արտահանելու սերտիֆիկացիա չունեն, իսկ ռուսականն էլ, փաստորեն, իրենց առջեւ իշխանության թեթեւ ձեռամբ փակվել է, ուստի միակ լուծումն այդ շուկան բացելն է: Պապոյանը խեղճացած ասել է, որ այս պահին դա հնարավոր չէ, ինչը վրդովեցրել է ջերմոցատերերին: Նրանք հիշեցրել են իշխանության խոստումները, թե տնտեսություն հիմնեք, գործ դրեք, մենք ձեր թիկունքին կկանգնենք, իրենք էլ մեծ ներդրումներ են արել, վարկեր վերցրել ու այսօր կանգնել փաստի առաջ: Ջերմոցատերերը հեռացել են դժգոհ եւ առանց լուծումների:

ՏԱՎՈՒՇ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՆՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄՆ Է

«Այն, ինչ որ անում էին, նաեւ՝ խաչը դոշներից կախած, դավադրություն էր հայ ժողովրդի դեմ». Իջեւանի Գանձաքար գյուղում օրեր առաջ հայտարարել էր Նիկոլ Փաշինյանը՝ նկատի ունենալով Բագրատ սրբազանի նախաձեռնած շարժումը՝ ի պաշտպանություն Տավուշի:

«Եթե մենք 2024 թվին տրվեինք ճնշումների եւ գնայինք ուրիշ ճանապարհով, ապա այսօր մենք առնվազն Իջեւանի կեսը կորցրած կլինեինք: Այն, ինչը որ անում էին, նաեւ՝ խաչը դոշներից կախած, դավադրություն էր հայ ժողովրդի դեմ: Եթե ժողովուրդն այդ «խաչով մարդկանց» հետեւից գնար, ապա սահմանն Իջեւանի միջով էր անցնելու, իսկ այսօր Իջեւանն ազատ է ու բարեկեցիկ: Սրբազան շարժման առաջնորդ Բագրատ սրբազանն ասում էր, որ Ոսկեպարի եկեղեցին հանձնվելու է ադրբեջանցիներին, Կիրանցում երեխաները դպրոց չեն կարող գնալ, բայց այդպես չի եղել: Այսօր Կիրանցում երեխաներն ապրում են առանց անվտանգության մի մտավախության: Հետո ասում են՝ ո՞վ է երաշխավորը՝ ես եմ երաշխավորը: Այսօր Կիրանցում երեխա կա՞, որը մտավախություն ունի դպրոց գնա կամ գնա ֆուտբոլի դաշտում խաղալու, որեւէ ծնող կա՞ Կիրանցում, որն ասում է, թե իր երեխային դպրոց չի ուղարկում՝ ասելով, թե անվտանգ չէ: Որովհետեւ Կիրանցից հարյուրավոր, հազարավոր կիլոմետր գտնվող պետություններ են իր անվտանգության երաշխավորը»,- ասել էր Փաշինյանը՝ շոկ առաջացնելով այդ ելույթը լսողների մոտ:

Պատգամավոր **Գառնիկ Դանիելյանը** մեզ հետ զրույցում Նիկոլ Փաշինյանի այն հայտարարությունը, որ եթե իշխանությունը գնար Սրբազան շարժման ճանապարհով, ապա Իջեւանի կեսը կորցրած կլինեինք, որակեց «ցնդաբանություն», ապա հավելեց. «Նրա ասածները բանականության եւ տրամաբանության հետ պարզապես որեւէ աղերս չունեն: Եթե այսքան հանձնելուց հետո դեռ ինչ-որ մարդիկ պետք է մտածեն, որ ընդդիմադիր ուժերը կարող էին ինչ-որ տարածքներ հանձնել, ապա անիմաստ է նրանց ինչ-որ բան բացատրելը: Նիկոլ Փաշինյանն այժմ էլ անոնսում է նոր տարածքներ հանձնելու մասին: Բարխուդարլուի մասին է խոսում, այլ բնակավայրերի մասին է խոսում՝ կիրառելով ադրբեջանական անվանումներ, Ազատամուտի հարակից տարածքներից է խոսում, եւ այսպես շարունակ: Հիմա ո՞վ է հող հանձնողը՝ մե՞նք, սրբազա՞նը, թե՞ Նիկոլ Փաշինյանը: Իշխանության ղեկին Նիկոլ Փաշինյանն է, այդ նա է ասում՝ ես տարածքն Ադրբեջանինն է, պիտի տանք, էն տարածքն Ադրբեջանինն է, պիտի տանք, Արցախն Ադրբեջանինն է, եւ վերջ, ու այս ամենի ֆոնին ոչ մի խոսք մեր օկուպացված տարածքների մասին: Այս մարդը միայն հանձնելուց ու տալուց է խոսում՝ ոչ մի բանի դիմաց: Նիկոլ Փաշինյանի համար հող հանձնելը երջանկության դրսեւորում է: Նա ուրախանում է, հաճույք է ստանում դրանից: Կիրանցից տարածքներ հանձնեցին, դիմել էինք դատախազություն: Ժամանակին այդ մարդկանց կադաստրի վկայականներ են տվել, ես դատախազին էլ հարց տվեցի այդ մասին, սակայն ոչ մի պատասխան չստացա: Հայկական տարածքներն այժմ փաստացի հանձնվել են Ադրբեջանին, եւ տեղը դրել են ադրբեջանական դրոշներ: Ինչպե՞ս կարող է բանական մարդն այս ամենից իրեն լավ զգալ՝ միայն ցավ, ուրիշ ոչինչ, չի կարող ապրել հայ մարդն այս ամենի ֆոնին: Նիկոլ Փաշինյանը հիմարություններով է լցնում օրակարգը, ու ստացվում է, որ մենք էլ արդարանում ենք»:

Ինչո՞ւ է Սրբազան շարժումը մնացել Փաշինյանի կոկորդին, որի մասին նա խոսում է նաեւ այսօր՝ երկու տարի անց, երբ շարժման առաջնորդը հորինված մեղադրանքով դեռ գտնվում է բանտում, եւ նրա մեղքը չի ապացուցվում: Այդ շարժումից անցել է երկու տարի: «Պատճառն այն է, որ նա ավելի շատ տարածքներ պիտի հանձներ, իսկ մենք մեր շարժումով դրանց մի մասի հանձնումը կանխեցինք: Մենք թույլ չտվեցինք, որ այլ տարածքներ էլ հանձներ: Հիմա Նիկոլ Փաշինյանն ասում է, որ նաեւ այդ տարածքներն է հանձնելու, նա ուզում է իր կիսատ թողած գործը շարունակի: Հուսանք՝ չի ընտրվի, եւ այլեւս ոչինչ չի հանձնվի: Այս մարդն անուղղելի է, նա, որպես նախընտրական խոստում, նորից տարածքների հանձնում է առաջարկում: Խոսքն Ազատամուտից Բերդ գնացող ճանապարհի մասին է: Ինչո՞ւ են մեր ընկերները, սրբազանը եւ մյուսները մինչ այս պահն անազատության մեջ. որովհետեւ նրանք կանխել էին այդ պրոցեսը»:

Նյութերը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՄԱՊ-ի Ալիկի որդու ՍՊԸ-ից 103.5 մլն դրամի գնում

Շրջակա միջավայրի նախարարությունը մեկ անձից կատարվող գնման ընթացակարգով պայմանագիր է կնքել «Դոպինգ Սփեյս» ընկերության հետ: Պայմանագրի համաձայն, պետք է իրականացվեն տեսահսկման համակարգերի մոնտաժման եւ կարգաբերման աշխատանքներ: Պայմանագրի արժեքը 103 մլն 572 հազար 460 դրամ է, որից 93 մլն 215 հազար 214 դրամն ընկերությանը փոխանցվել է որպես կանխավճար: Հատկանշական է, որ «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն այս պայմանագրով հանդիսանում է գործակալ, իսկ կապալառուն «Թիմ Սիստեմս» ՓԲԸ-ն է: Աշխատանքներն իրականացվելու են Ոսկերիչների փողոցի 1 հասցեում, որտեղ գտնվում է «Մերիդիան» էքսպոկենտրոնը:

«Դոպինգ Սփեյսը», ըստ իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստրի, հիմնվել է 2023թ. հուլիսի 4-ին: Ընկերության բաժնետոմսերի 51 տոկոսը Մակար Պետրոսյանինն է՝ ՀՀԿ-ական նախկին պատգամավոր Ալեքսան Պետրոսյանի (ՄԱՊ-ի Ալիկի) որդունը: Ընկերության մյուս բաժնետերը Հայկ Սիմոնյանն է՝ «Դոպինգ» գովազդային գործակալության հիմնադիրը: «Դոպինգ Սփեյսն» այն նույն ընկերությունն է, որը պետք է Երեւանում կազմակերպեր ամերիկացի ռեփեր Սնուփ Դոգի համերգը, որն այդպես էլ չկայացավ, չնայած փողերը փոխանցվեցին: Իսկ «Թիմ Սիստեմս» ՓԲԸ-ն պատկանում է Ալեքսանդր եւ Հայկ Եսայաններին, որոնք «Գրանդ Հոթել Երեւանի»-ի սեփականատերն են եւ «Արմենտել» ընկերության իրավահաջորդը:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՆՉՔԱՆ ՀՈԴՎԱԾ ԿԱ, ԽԱԽՏԵԼ ԵՆ

«Դրապարակի» զրուցակիցը «Հայաքվե» նախաձեռնության անդամ **Արամ Պետրոսյանն** է:

- Երբ խոսվում է ընտրակեղծարարության եւ ընտրական խարդավանքների մասին, մեր հանրությունն անմիջապես մտաբերում է քվեատուփերի լցոնումները կամ 5-10 հազար դրամով ձայն գնելը, սակայն բազում այլ կեղծիքներ կան այժմ: Որո՞նք են ժամանակակից ընտրակեղծարարության մեթոդները: «Հայաքվեն» իրականացնում է դիտորդական առաքելություն, ի՞նչ նոր մեթոդներ եք նկատել:

- Օրինակ, Հանրային հեռուստաընկերության «Մեծ բանավեճ»-ի ժամանակ ընտրակեղծարարություն տեղի ունեցավ: Էդգար Ղազարյանը ներկայացնում էր «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը, իսկ Դավիթ Անանյանը՝ «Միասնության թեւեր»-ը: 30 րոպե նրանց զրկեցին ձայնի իրավունքից, սակայն Ալեն Սիմոնյանը, անկախ նրանից՝ հարցերը վերաբերում էին իրեն, թե ոչ, մեջ էր ընկնում, անգամ բանը հասավ նրան, որ Էդգար Ղազարյանը ռեպլիկի տեսքով հարց տվեց, թե՝ չե՞ք ուզում նրա բարձրախոսն էլ անջատեք: Հանրային հեռուստաընկերությունը գուցե տեխնիկապես հավասարություն է դնում ուժերի միջեւ, սակայն ամեն հնարավոր առիթով ընդդիմության դեմ հակաքարոզ է իրականացնում: Անդադար հայտարարում են՝ վարչապետն էս արեց, էն արեց, գովում են իրենց վարչապետին, սակայն ընդդիմության մասին խոսելիս պարզապես դատավճիռներ են ներկայացնում, անունը դնում քաղաքական տեքստ, խախտում են անմեղության կանխավարկածը, խոսում են այն մասին, որ բանտերում փակել են «հանցագործներին», սակայն բոլորս գիտենք, որ ընտրություններից հետո, այսպես թե այնպես, նրանք՝ բոլորը, դուրս են գալու կալանավայրերից՝ արդարացված: Ակնհայտ է, որ կիրառում են լծակներ եւ կեղծում են պրոցեսները՝ օգտվելով իշխանական ռեսուրսներից, որոնք այս պահին ունեն.... արդյունքում ստեղծվել են խիստ անհավասար պայմաններ, իսկ խիստ անհավասար պայմաններն ընտրությունների ժամանակ արդեն իսկ մեծ ընտրակեղծիք են: Պարտադիր չէ, որ թերթիկ վերցնես ու լցոնում անես, վաղուց անցել են այդ թվերը:

- Իշխանությունները, վախենալով արցախցիների քվեներից, նրանց մեծամասնությանն արգելեցին մասնակցել ընտրություններին՝ պատճառաբանելով անձնագրերի խնդիրը, բայց, նախ, նրանք հայկական անձնագրեր ունեին եւ ասում են, որ ամիսներ առաջ դիմել են Միգրացիայի ծառայություն, սակայն նոր նմուշի անձնագրեր տալը միտումնավոր ձգձգում են, որպեսզի նրանք ընտրություններին չմասնակցեն:

- Այո, մենք պայքարում ենք այդ երեւույթի դեմ: Համատարած մերժում են արցախցիներին՝ մասնակցել ընտրություններին, ինչն ապօրինություն է: Այդ մարդիկ իրենց նույն այդ անձնագրերով մասնակցել են 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններին: «Անձնագրի մասին» օրենքը նրանց չի արգելում հիմա էլ մասնակցել ընտրություններին: Արցախցիների անձնագրերը Հայաստանի անձնագրեր են, մեր՝ բոլորիս անձնագրերի նման, դրանք բնավ ճամփորդական անձնագրեր չեն, բայց մարդկանց զրկում են քվեարկությանը մասնակցելուց, հասկանալի նպատակներով. ամեն բան իշխանությունն անում է իր քմահաճույքով, հասկացանք, որ իշխանություն են, բայց հո ամեն ինչ իրենց ասելով չէ՞: Սահմանադրության մեջ ինչքան հոդված կա, խախտել են:

- Խոսակցություններ կան, որ որոշակի մախինացիաների են նաեւ դիմում, եւ կարող են շրջիկ քվեարկողների խմբեր լինել, որ տարբեր տեղամասերում քվեարկեն:

- Ես էլ եմ նման ասեկոսեներ ստացել, բայց չունեմ հստակ փաստեր: Եթե կլինեն նման դեպքեր, մենք անպայման բռնելու ենք նրանց, խոսելու ենք այդ մասին: Ֆիքսենք, որ այս իշխանությունը քաղաքացուն պաստառ պոկելու համար հասցրեց ինքնասպանության, իսկ Ալեն Սիմոնյանը հայտարարում է, որ դժբախտությունների վրա դիվիդենտներ է ընդդիմությունը հավաքում: Անգամ 15 այրված զինվորների ծնողները երբ մոտենում են իրենց, քիչ է մնում հոշոտեն, ոչինչ հաշվի չեն առնում՝ ո՛չ տարիք, ո՛չ կարգավիճակ, ընդդիմադիր քաղաքացիներին տեռորիստի տեղ են դրել, բայց չէ՞ որ պարտավոր են լսել բոլորին, նա 3 միլիոն քաղաքացիների վարչապետն է, այլ ոչ թե միայն իրենց աջակիցների: Նախկինում որքան վատ ու արատավոր երեւույթներ եղել են, օրվա իշխանությունը դրանք կատարելագործել է:

ՄՏԱԾԵԼ ԵՆ՝ ԳԼՈՒԽՆԵՐԸ ԿՊՐԾԱՑՆԵՆ, ԲԱՅՑ ՍԽԱԼՎԵԼ ԵՆ

ՀՈՒՆԻՍԻ 7

Իշխանական թիմը, պարզվում է, Հայաստանում կազմակերպված հակառուսական գագաթնաժողովներից եւ մեր երկրում Զելենսկի խաղացնելուց առաջ արդեն կանխատեսել էր Ռուսաստանից սպասվող արգելանքները, սակայն ոչ թե փորձել են դրանց դեմն առնել, այլ միայն անել ամեն ինչ, որ իրենց քարոզարշավը հարամ չլինի:

ՔՊ-ական մեր աղբյուրները փոխանցում են, որ իշխանության ներսում նախապես քննարկել են հավանական սցենարները եւ որոշել, որ պետք է սկզբում՝ մինչ ռուսական սանկցիաներն իրենց ազդեցությունը կթողնեն, այցելել Արարատյան դաշտավայր, որի բնակչությունն առաջինն է տուժելու լոլիկի, ելակի, կանաչեղենի, պտուղ-բանջարեղենի արտահանման արգելքից: Որպեսզի քարոզարշավի թեժ շրջանում այլեւս տուժած գյուղացիների երեսը չտեսնեն: Իսկ արդեն տոտալ սահմանափակումների ժամանակ ՔՊ-ն փակած կլինի Արմավիրի, Արարատի, Արագածոտնի մարզերը՝ քարոզարշավն ու այցերն ավարտած կլինի եւ անցում կկատարի այն մարզեր, որտեղ բերքը հասնում է հուլիս-օգոստոս ամիսներին, երբ ռուսական սանկցիաները դեռ որեւէ ազդեցություն գործած չեն լինի, ուստի բողոքի ալիք էլ դեռ չի լինի:

Այս օրերին Փաշինյանը կոկորդ է պատռում Գեղարքունիքում, որտեղ արդեն անցկացնում է երկու օր: Դրանից առաջ երկու օր Տավուշում էր, Շիրակի մարզում, մինչ այդ՝ Երեւանում՝ բերքը ստացած եւ դրա իրացման ձեռքը կրակն ընկած գյուղացիների աղմուկից ու դժգոհությունից հեռու: Սա եւս մեկ անգամ ապացուցում է, որ այս մարդիկ պարզապես թքած ունեն գյուղացիներին հասցրած աղետի վրա, կարեւորը՝ ինչ-որ մի ձեւով ընտրվեն: Իսկ գյուղատնտեսությամբ զբաղվողները, բերքն արտադրողներն ու արտահանողները ոնց ցանել-մշակել-հավաքել են, թող նույնկերպ էլ տակից դուրս գան կամ ուղղակի բերքը ջուրը գցեն:

Սակայն իշխանության մեր աղբյուրի խոստովանությամբ, նրանց հաշվարկն իրեն այնքան էլ չի արդարացրել, նրանց թվացել է, որ այս փուլում եթե գլուխները պրծացնեն տուժած գյուղացիներից, շրջանցեն նաեւ խնդիրը՝ կմարի, կգնա: Բանն այն է, որ այս օրերին գյուղատնտեսությամբ զբաղվող մարզերում ապրող քաղաքացիները, որոնք մինչեւ վերջերս իշխանության աջակիցներն էին, սկսել են բացահայտ դժգոհություն հայտնել համայնքների ղեկավարների, մարզպետների հետ հանդիպումների ժամանակ եւ սպառնալ, որ նման իրավիճակում ՔՊ-ին չեն ընտրելու: Այս լուրերը բերել հասցրել են Նիկոլ Փաշինյանին, որն էլ երեկվա քարոզարշավի ժամանակ ընդդիմադիր մրցակիցներին ուղղված «կզացնելու, ոչնչացնելու, բանտերը լցնելու» մասին հայտարարությունների փոխարեն ստիպված անդրադառնում էր այդ խնդիրներին:

Ինչպես հայտնի է, մայիսի 22-ից Ռուսաստանն արգելել է ծաղկի ներմուծումը, հետո արդեն գյուղմթերքի՝ պտուղ-բանջարեղենի: Ռուսական շուկան կորցնելը սնանկացում է սպառնում ոչ միայն ծաղկագործներին, այլեւ ընդհանրապես բոլոր ջերմոցատերերին, գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքացիներին, բեռնափոխադրողներին, ֆուռերի վարորդներին, որոնք մեծ մասամբ վարկերի տակ են ու վարկերը մարելու խնդիրներ ունեն: Եթե անգամ հաջողացնեն ներքին շուկայում ինչ-որ կերպ, էժան գներով իրացնել իրենց արտադրանքը, դա այլեւս այն օգուտները չի բերի, ինչը սպասում էին արտահանման պարագայում: Հայաստանից արտահանվող գյուղմթերքի 90-95 տոկոսը մինչեւ հիմա գնացել է ռուսական շուկա, որն այժմ փաստացի փակ է նրանց առջեւ: Երեկ Գեղարքունիքում Նիկոլ Փաշինյանն անորոշ հայտարարել է, թե Հայաստանից վարդերի եւ բանջարեղենի առաջին խմբաքանակներն արդեն ուղարկվել են նոր շուկաներ: Հարցին՝ խոսքը Եվրամիությա՞ն, թե՞ այլ շուկաների մասին է, Փաշինյանն առանց կոնկրետացնելու պատասխանել է. «Եվրամիության եւ այլ»: Ավելի ուշ գրում էին, որ ծաղիկն արտահանվում է Ուկրաինա, որտեղ հիմա ծաղիկի պահանջարկ կա, հատկապես՝ սգո ծաղիկների: Փաշինյանը նաեւ խոստացել է պղպեղ արտադրողների վնասները փոխհատուցել. նախընտրական կաշառք է խոստացել, թե փող կտամ կորուստներ ունեցողներին:

Նա ասել է, որ արդեն մի քանի պատվիրակություն աշխատում է նոր շուկաներ գտնելու ուղղությամբ: «Այսօր մեր մի քանի գործարար պատվիրակություններ արդեն աշխատում են, եւ արդեն վարդերի ու բանջարեղենի առաջին խմբաքանակները դուրս են եկել, տեղ կհասնեն, նոր կասեմ, թե որ երկրներ»,- նշել է նա եւ վստահեցրել, որ հայկական արտադրանքի իրացման խնդիր չի լինի: «Եվ ոչ մի ապրանք չի մնալու: Հիմա արդեն արտահանվում են ուրիշ ուղղություններով»: Ասել է նաեւ, որ ընտրություններից հետո մեկնելու է Մոսկվա, ՌԴ-ի հետ լեզվակռվի մեջ չի մտնելու, հանգիստ պաշտպանելու է Հայաստանի դիրքորոշումները: «Մենք չենք գործելու ՌԴ շահերի դեմ, բայց նաեւ չենք գործելու մեր շահերի դեմ»,- ասել է նա՝ ակնհայտորեն հույս փայփայելով, որ այս անգամ էլ կհաջողվի լարախաղացություն անել երկու բեւեռների միջեւ, այն է՝ երկուսին էլ խաբել, թե ես ձեզ հետ եմ:

Փաշինյանի երեկվա հայտարարությունից հետո սոցցանցերում ակտիվ արձագանքներից հասկանալի դարձավ, որ իրականում խնդիրը լուծված չէ. այլընտրանքային շուկա գտնելը հեշտ չէ եւ օրերի ու շաբաթների հարց էլ չէ, ավելի շուտ՝ տարիների հարց է, որի ընթացքում հայկական գյուղատնտեսությունը կարող է հողին հավասարվել: Ակնհայտ է, որ Փաշինյանը ստում է՝ փորձելով հանգստացնել մարդկանց, որ հունիսի 7-ին իրեն քվե տան: Իսկ կատարվածի իրական հետեւանքները կերեւան առաջիկա ամիսներին:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԳՈՆԵ ԳԻՏԵ՞Ն, ԹԵ ԻՆՉ Է ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ, ԴԱ ԼՐԻՎ ԱՅԼ ԲԱՆ Է

Հայ նորագույն պատմության մեջ առաջին անգամ համապետական ընտրությունների ֆոնին մի շարք ընդդիմադիր քաղաքական դերակատարներ բանտարկված են: Նիկոլ Փաշինյանի «ժողովրդավարական» երկրում շարունակում են ընդդիմությանը լռեցնելու պարզագույն եւ փորձված մեթոդներ կիրառել՝ քրեական հետապնդումներ, կալանք, տնային կալանք, հարցազրույց տալու արգելք եւ այլն: Այս պահին կալանավորված են արցախցի հայտնի հետախույզ, «Ուժեղ Հայաստան» թիմի անվտանգության պատասխանատու Արթուր Ավանեսյանը՝ Կանդազը, ԲՀԿ ցուցակի երկրորդ համար, «Մայր Հայաստան» կուսակցության նախագահ Անդրանիկ Թեւանյանը, ԴՕԿ ցուցակի առաջին համար, «Սեւ հովազ» ջոկատի հրամանատար Սերոբ Գասպարյանն էլ տնային կալանքի տակ է: Հացադուլի մեջ է շաբաթներ առաջ Նիկոլ Փաշինյանին հարց տալու համար կալանավորված արցախցի ակտիվիստ Արտուր Օսիպյանը: Նրա նկատմամբ քրեական վարույթ է հարուցվել Քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաեւ՝ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը), 297-րդ հոդվածի 1-ին մասով (խուլիգանությունը) եւ 211-րդ հոդվածի 1-ին մասով (քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը): Իսկ երեկ երեկոյան կալանավորվեց «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Ալիկ Ալեքսանյանը, որը պետք է վարեր հունիսի 3-ին այս ուժի մեծ հանրահավաքը: Նա մեղադրվում է առանձնապես խոշոր չափերի փողերի լվացման մեջ: Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության համաձայն՝ նա, լինելով «Մեր ձեւով ազգային արժեքների պաշտպանություն» հասարակական կազմակերպության նախագահը, ՀԿ-ում աշխատանքի է ընդունել շուրջ 1400 քաղաքացու, որոնցից 400-ն աշխատում է նաեւ այլ հաստատություններում: Քննչական կոմիտեի հաղորդագրության համաձայն՝ 1400 քաղաքացին ընդունվել է աշխատանքի, սակայն առանց աշխատանքի հաճախելու ստացել է աշխատավարձ, ինչը ՔԿ-ն որպես փողերի լվացում է դիտարկել: Բայց այդ երբվանի՞ց իրավապահ համակարգը ստացավ մասնավոր ընկերությունները, այդ թվում՝ ՀԿ-ները վերահսկելու գործառույթ: ՀԿ-ն չի ֆինանսավորվում պետական բյուջեից, հետեւապես՝ չի կարող մասնավորի տրամադրած աշխատավարձը համարվել փողերի լվացում, իսկ նրա աշխատողների՝ աշխատանքի գնալ-չգնալը դիտվել որպես օրինազանցություն: Եթե մասնավոր գործատուն արդյունավետ է համարում, որ իր աշխատակիցներն իրենց աշխատանքը կատարեն հեռավար, ապա ո՞ր իրավունքով է իրավապահը մտնում այդ դաշտ եւ անգամ հաղորդագրության մեջ սա մատնանշում: Ինչո՞ւ պրոիշխանական ՀԿ-ների հետ կապված էլ նման «բացահայտումներ» չեն անում եւ չեն հրապարակում, թե, օրինակ, Դանիել Իոանիսյանի կամ Արթուր Սաքունցի ՀԿ-ում քանի աշխատակից է աշխատավարձ ստանում, ինչ աշխատանք են կատարում եւ այլն: Իրավաբան, Աշխատանքային օրենսգրքի մասնագետ **Գեւորգ Պետրոսյանը** «Հրապարակի» հետ զրույցում ասում է.

- Իրավապահներն այդ աշխատավարձերը համարում են ընտրակաշառք: Հանցանքի տարրեր չկան այդտեղ: Եթե անձը գնում է աշխատանքի եւ, օրինակ, չի վճարվում, դրա համար գոյություն ունի Աշխատանքի տեսչական մարմին, իսկ եթե, օրինակ, աշխատանքից բացակայում է, բայց ստանում է աշխատավարձ, դա եւս օրենքի խախտում չէ, քանի որ գործատուն բացակայությունը կարող է համարել հարգելի եւ վճարել: Ի՞նչ գործ ունի իշխանությունն այս ամենի հետ: Ի վերջո, իրավապահները պետք է ապացուցեն, որ այդ աշխատավարձերն ընտրակաշառքի տրամաբանության մեջ են: Նիկոլի իշխանությունը շարունակ օրենքներ է խախտում՝ գործելով լրիվ օրենքին հակառակ: Այն բոլոր իրավապահները, ովքեր լծվել են այս ապօրինությունները լեգիտիմացնելու գործին, պետք է պատասխանատվության ենթարկվեն Քրեական օրենսգրքի 480-րդ հոդվածով:

- Ո՞ր դեպքում է խախտվում օրենքը, երբ աշխատակիցը չի գնում աշխատանքի եւ ստանում է աշխատավարձ:

- Եթե աշխատողը չի գնում աշխատանքի, կարող է վարձատրվել նաեւ, այդտեղ չկա օրենքի խախտում: Գործատուն կարող է հարգելի համարել աշխատակցի՝ աշխատանքի չգնալը եւ վճարել նրան այդ օրերի համար: Բայց այդ ամենը կապել ընտրական գործընթացների հետ, խելագարություն է: Գոնե գիտե՞ն, թե ինչ է փողերի լվացումը, դա լրիվ այլ բան է: Սրանք ամեն ինչի պատրաստ են, միայն թե Նիկոլը նորից ընտրվի: Սամվել Կարապետյանից մեծ վախ ունեն, դրա համար դիմելու են ամեն ինչի, ոչնչի առաջ կանգ չեն առնելու, անգամ մարդկային զոհեր են տալու, միայն թե Նիկոլը մնա իշխանության, որպեսզի այդ քրջախրջախումբը պաշտպանված լինի:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՎՐՈՊԱ

ԵԹԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՑ ՀԱՎԱՏԱ, ՀԱՅՈՑ ԶԱՐԹՈՆՔԸ ԴԺՎԱՐ Է ԼԻՆԵԼՈՒ

Հայկա ԱԼՈՅԱՆ

Հարցազրույց ֆրանսիացի գրող, քաղաքագետ, Եվրախորհրդարանի նախկին պատգամավոր **Այմերիկ Շոպրոդի** հետ

- Ռուսաստանի նախագահը հայտարարեց, որ Հայաստանը պետք է ընտրություն կատարի՝ գնում է դեպի Եվրոպա, թե մնում է ԵԱՏՄ-ում: Սա ուլտիմատում է:

- Կարծում եմ՝ սա մեզ չպետք է զարմացնի: Ուկրաինայի շուրջ հակամարտությունը ցույց է տալիս, որ ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի ռազմավարությունը հետեւյալն է. Ռուսաստանի բոլոր հարեւաններին կտրել նրանից թե աշխարհաքաղաքական, թե տնտեսական առումով: ԵՄ-ն պատերազմ է մղում Ռուսաստանի դեմ, որն ավելի ու ավելի ակնհայտ է դառնում: Այս պայմաններում ինչո՞ւ պետք է Ռուսաստանը համատեղելի համարի ԵԱՏՄ-ին եւ ԵՄ-ին անդամակցությունը: Չէի ասի, թե «վերջնագիր» բառն ամենաճիշտ բնորոշումն է, բայց կարծում եմ՝ կարող ենք այս դեպքում խոսել նախազգուշացման մասին:

- Ո՞նչ կլինի Հայաստանի հետ, եթե, ի վերջո, որոշի դուրս գալ ԵԱՏՄ-ից:

- Եթե Հայաստանը որոշի դուրս գալ ԵԱՏՄ-ից՝ հանուն ԵՄ-ի, ապա Ռուսաստանը կանի բոլոր անհրաժեշտ եզրակացությունները: Ռուսաստանը Հայաստանի առաջատար առեւտրային գործընկերն է: 2025 թ. արտաքին առեւտրի 35%-ը Ռուսաստանի հետ առեւտրաշրջանառության մասն է կազմում: Հայաստանը կկորցնի իր սննդամթերքի, էլեկտրական սարքերի, խմիչքների, թանկարժեք քարերի եւ այլնի արտահանման հիմնական ուղին: Կկորցնի իր էներգիայի, մետաղների, հացահատիկային մշակաբույսերի եւ այլնի կարեւորագույն աղբյուրը: Ես վստահ չեմ, որ Եվրամիությունը կարող է փոխարինել այդ ամենը:

- Հայաստանը ԵՄ անդամ կդառնա՞, տեսնո՞ւմ եք նման հնարավորություն:

- Ես այդպես չեմ կարծում: Եվրամիությունը լուրջ ինքնության ճգնաժամ է ապրում: Միացյալ Թագավորությունը դուրս է եկել ԵՄ-ից: ԵՄ երկրների մեծ մասում առաջատար քաղաքական կուսակցությունները ցանկանում են իրենց երկիրը դուրս բերել ԵՄ-ից: Մարդկանց մեծ մասն անվստահություն է տածում Եվրամիության նկատմամբ, բացառությամբ ամենատարեց հատվածի, որը մեծացել է դաշնային Եվրոպայի ուտոպիայում: Եվրամիությունը ոչնչացրել է Արեւմտյան Եվրոպայի գրեթե բոլոր երկրների ազգային արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Թույլ է տվել մուսուլմանների զանգվածային ներգաղթ, որը ոչնչացրել է եվրոպական հասարակությունների անվտանգությունը: Եվրամիությունը ճգնաժամի մեջ է. նախ պետք է ինքը գոյատեւի եւ խուսափի քայքայվելուց: Ակնհայտ է, որ նոր երկրների ինտեգրման նպատակը չկա: ԵՄ-ի՝ Հայաստանին տված այս խոստումը գայթակղություն է. դա ծառայում է միայն Ռուսաստանի հետ հարաբերությունների լարվածության սրմանը, քանի որ եվրոպացի շատ առաջնորդներ փորձում են պահպանել ԵՄ համախմբվածությունը՝ հորինելով ընդհանուր թշնամի՝ Ռուսաստանը:

- Հայաստանի շահերի համար ո՞րն է ավելի իրատեսական՝ ԵԱՏՄ-ում մնա՞լը, թե՞, այնուամենայնիվ, Եվրոպա գնա՞լը:

- Ակնհայտ է, որ ռեալիզմը հետեւյալն է. չպետք է թույլ տալ, որ խախտվի սեփական պատմությունը: Պատմականորեն, Հայաստանը մոտ է Ռուսաստանին. Ռուսաստանն աշխարհաքաղաքական եւ տնտեսական գործընկեր է, որը, իհարկե, կատարյալ չէ եւ որը բավականաչափ չաջակցեց Հայաստանին Ադրբեջանի հետ պատերազմների ժամանակ, քանի որ ձգտում էր պահպանել միջնորդի իր դերը, բայց, այնուամենայնիվ, Հայաստանի պատմական գործընկերն է: Ֆրանսիայում կա մի ասացվածք, որն ասում է. «Վտանգավոր է երես թեքել այն ամենից, ինչը ձեռքի տակ ունես, լրիվ անհայտի համար»: Հայաստանում նրանք, ովքեր բորբոքում են ԵՄ երազանքը, մարդկանց հավատացնում են Եվրոպա գնալու մասին, ստախոսներ են, նրանք երազներ են վաճառում, եթե հանրությունը նրանց հավատա, հայոց զարթոնքը դժվար է լինելու:

- Թրամփն իր աջակցությունը հայտնեց Փաշինյանին: Ինչո՞ւ, ո՞րն էր դրդապատճառը:

- Այս հարցում Թրամփը շարունակում է հետեւել Արեւմուտքի քաղաքականությանը, որը ձգտում է Ռուսաստանին կտրել իր բոլոր բնական գործընկերներից: Փաշինյանը, ներողություն եմ խնդրում իրենից, բայց պետք է ասեմ, որ պարզապես օգտակար խամաճիկ է ամերիկացիների եւ եվրոպացիների ձեռքում՝ Ռուսաստանի գործընկերային կապերի թուլացման գործում: Թրամփը չի գործում հօգուտ հայերի, նա գործում է ռուսների դեմ եւ օգտագործում է Փաշինյանին այդ նպատակով:

- ԱՄՆ-ն փորձո՞ւմ է ուժեղացնել իր ազդեցությունը Կովկասում: Եթե այո, ո՞րն է դրա նպատակը:

- Սա նորություն չէ: 1990 թվականից ի վեր ՆԱՏՕ-ի նպատակը, ի դեպ, հակասելով Ջորջ Բուշ ավագի օրոք ռուսներին տրված երաշխիքներին, եղել է կուլ տալ նախկին խորհրդային երկրները՝ բալթյան երկրները, Բալկանները, Կենտրոնական Եվրոպան, Կովկասը, Կենտրոնական Ասիան: Նպատակն է՝ շրջապատել Ռուսաստանի Դաշնությունը ՆԱՏՕ-ի անդամ երկրների գոտիով: 2000-ականների սկզբին տեղի ունեցան գունավոր հեղափոխություններ, սակայն այս ռազմավարությունը վատ ավարտ ունեցավ Ուկրաինայի համար, քանի որ Արեւմուտքն այժմ պրոքսի պատերազմ է մղում Ռուսաստանի դեմ Ուկրաինայի տարածքում, եւ դա ողբերգական է: Ես նկատի ունեմ, որ ժողովուրդների կողմից սխալ ընտրությունը կարող է ողբերգական հետեւանքներ ունենալ: Հայերը, որոնք բավականին թուլացել են թե՛ Ադրբեջանի դեմ ռազմաքաղաքական բալանսի առումով, թե՛ ունեն ղեկավար, որ պատրաստ է զիջման գնալ ու հրաժարվել պատմական հողերից, չպետք է հրաժարվեն իրենց բնական դաշնակիցներից:

- Պարբերաբար փաստաթղթեր են ստորագրվում ՀՀ իշխանությունների հետ: Արդյո՞ք սա նշանակում է, որ Հայաստանը կշահի դրանից, թե՞ հակառակը կլինի:

- Ես շատ եմ տխրում հայերի համար: Միացյալ Նահանգների պատերազմն Իրանի դեմ ցույց տվեց մի բան, որ ԱՄՆ-ի եւ Թրամփի համար կա միայն մեկ իրական դաշնակից՝ Իսրայելը: Եվ, ինչպես գիտեք, Իսրայելն աջակցում է Ադրբեջանին՝ Հայաստանի դեմ: Ադրբեջանի գազը շատ ավելի կարեւոր է եվրոպական կառավարությունների եւ Եվրոպական հանձնաժողովի աչքում, քան հայ ժողովուրդը: Ես չէի ցանկանա, որ հայ ժողովուրդը խաբվի ամերիկյան եւ եվրոպական կեղծ խոստումներով:

- Որքանո՞վ են կարեւոր հունիսի 7-ի ընտրությունները: Արդյո՞ք անհրաժեշտ է իշխանափոխություն, ըստ Ձեզ, եւ եթե այո, ապա ինչո՞ւ:

- Այս ընտրությունները չափազանց կարեւոր են, եւ կա այդ կարեւորության մի նշան, եւ Մակրոնը, եւ Ռուբիոն եկան Փաշինյանին աջակցելու: Սա նշանակում է, որ Արեւմուտքը փաշինյանական Հայաստանը համարում է թույլ եւ մանիպուլյացիայի ենթարկվող, միակ նպատակով՝ Ռուսաստանին մեկուսացնելու հարցում օգտագործելու համար: Սա հայերի ապագային միջամտելու գործողություն է, եւ ես հույս ունեմ, որ հայ ժողովուրդը, որը մեծապես տառապել է 1990 թվականից ի վեր, չի կորցնի իր ինքնիշխանության մի նոր չափաբաժին:

- Հայաստանն ընտրություն է կատարում Ռուսաստանի եւ Արեւմուտքի՞, թե՞ Ռուսաստանի եւ Թուրքիայի ազդեցության միջեւ:

- Կարծում եմ՝ Հայաստանի շահն Արեւմուտքը Ռուսաստանի դեմ կամ Ռուսաստանն Արեւմուտքի դեմ ընտրելը չէ, այլ իր քաղաքականության մեջ հավասարակշռության քաղաքականությունը շարունակելը եւ պաշտպանելը, ինչը ես անվանում եմ աշխարհի բազմաբեւեռ տեսլական: Հայաստանը լավ հարաբերություններ ունի Արեւմուտքի հետ եւ մեծ սփյուռք, որը թույլ է տալիս նրան կապված մնալ Արեւմուտքի հետ: Բայց ինչո՞ւ այդ ամենի հետ մեկտեղ կտրվել ավանդական գործընկերներից՝ Իրանից եւ Ռուսաստանից: Հայաստանի ազգային շահերին իսկապես կապված առաջնորդը կկարողանա համատեղել Արեւմուտքի, Ռուսաստանի եւ Իրանի հետ լավ հարաբերությունները ու կհասկանա նման քաղաքականության անհրաժեշտությունը: Սա իսկապես չափավոր, իրատեսական եւ համարձակ դիրքորոշում է:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀՈՒՅՍԸ ՎԱՐՈՐԴԱԿԱՆԻՑ ԶՐԿՎԱԾՆԵՐՆ ԵՆ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նիկոլ Փաշինյանն օրենքով սահմանված կարգով վարորդական իրավունքից զրկված վարորդների խնդրին անօրինական ու միանձնյա լուծում առաջարկեց, որն ավելի շատ ընտրակաշառք է, քան՝ հարցի լուծում: Նա հարբածության պատճառով վարորդական իրավունքից զրկված վարորդներին շաբաթներ առաջ տեղեկացրեց, որ նրանց վարորդական իրավունքը կվերականգնվի առանց քննության, բայց ոչ թե 13 բալով, այլ՝ 6-ով: «Եթե այդ մեկ տարվա ընթացքում չի զրկվում իրավունքից, վերադառնում է 13 բալի: Եթե սրանից հետո կրկին բալերը զրոյանում են, ապա այլեւս առանց քննության հնարավոր չի լինելու իրավունքը վերականգնել»,- ասաց Նիկոլ Փաշինյանը: Մինչդեռ ուղիղ մեկ տարի առաջ՝ Կառավարության նիստի ընթացքում Փաշինյանը վրդովված պնդում էր, որ վարորդների 95 տոկոսը նորմալ մեքենա վարել չգիտի, ու պետք է ատեստավորել նրանց: «Խմում՝ գնում ա պատին տալիս ա, 7-8 հոգի զոհվում ա, դուրս է գալիս, ասում ա՝ «արա, էսի երկիր չի ընդհանրապես»: Լավ, սենց չի ըլնի, ժողովուրդ ջան: Որովհետեւ եթե մեր պատասխանատվությունն ա, ուրեմն պտի փակենք, ասենք՝ «չեք քշում»,- հայտարարում էր նա: Իսկ ընտրություններին ընդառաջ, քարոզարշավի 9-րդ օրը պարզվեց՝ այնքան էլ վատ բան չէ խմած վարելն ու մեքենան ջարդելը, կարելի է ընդամենը 50 հազար դրամի տուգանք վճարել եւ վարորդական իրավունքը հետ ստանալ՝ առանց նոր քննություն հանձնելու: «Նրանք, ում մի տարին արդեն լրացել ա, մենք առաջարկում ենք առանց քննության, որոշակի, պարզապես առանց քննության չէ ... սպասեք, սպասեք...», եւ խաղի նոր կանոններ է առաջարկում. 13-ի փոխարեն սկզբնականում՝ 6 բալ, իսկ եթե սրանք էլ մեկ տարում զրոյանան, ապա այդ դեպքում նոր քննություն հանձնել:

Մենք Ներքին գործերի նախարարությունից տեղեկացանք, որ միայն 2025 թվականին վարորդական իրավունքից զրկվել է ավելի քան 5 հազար 400 քաղաքացի: Հիշեցնենք, որ այս տարեսկզբին էլ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը հայտնել էր, որ անձանց վարորդական իրավունքից զրկելու գերակշիռ պատճառը եղել է ալկոհոլ օգտագործած վարելը:

ԱԶԳ

ՆԻԿՈԼ ԵՎ ԶՐՈՆԵՐ

Հիշում եմ, թե հայ-թուրքական պրոտոկոլների ստորագրման ժամանակ ինչպես էի պահանջում Էդվարդ Նալբանդյանի՝ ՀՀ արտգործնախարարի հրաժարականը: Դեռ աչքիս առաջ են իր կարիերան անփառունակ կերպով ավարտած Նալբանդյանի մասնակցությամբ հեռուստակադրերը, թե ինչպես են Ցյուրիխում Հիլարի Քլինթոնն ու ԵՄ պաշտոնյաները քաշքշում նրա թշիկները, համոզում, որ ստորագրի պրոտոկոլները: Ինձ մեղադրում էին այն ժամանակ, թե ինչու Սերժ Սարգսյանի հրաժարականը չես պահանջում: Ի՞նչ կապ ունի Նալբանդյանը, ասում էին, նրանից վերեւ նախագահ կա, պետք է նրա հրաժարականը պահանջել: Ես էլ մի ձեւով տակից դուրս էի գալիս. եթե նախագահի հրաժարական պահանջելն այդքան հեշտ է, գնացեք՝ դուք պահանջեք: Ինչ է, արտգործնախարարը «ֆուֆլո՞» է, սեփական կարծիք չունի՞, առանց նախագահի որոշումներ չի՞ կայացնում, վերջապես՝ մահկանացու չէ՞, սխալներ չի՞ գործում: Ու այնպես էլ չէր, որ Սերժ Սարգսյանի դեմ ընդհանրապես ցույցեր չէի անում: Սերժ Սարգսյանին էլ մեծ պատկառանքով ասում էի. «Նախագահ, մի՛ զիջիր»: Այս հիմար վիճակը բավականին երկար տեւեց, բայց ես չեմ երկարացնի, որովհետեւ ՀՀ Սահմանադրական դատարանը ժամանակին նկատեց պրոտոկոլների տողատակերում թաքնված թուրքական նախապայմաններն ու կասեցրեց դրանց վավերացման ընթացքը: Պարոն Նալբանդյանը, որ մինչ այդ ԱԺ-ում մեզ նախատում էր, թե պրոտոկոլներում նախապայմաններ չկան, թե եզան տակ հորթ ենք փնտրում, համակերպվեց ստեղծված իրավիճակին, բայց շարունակեց արտգործնախարար աշխատել:

Այսօր ՀՀ արտգործնախարարն Արարատ Միրզոյանն է՝ արտաքին քաղաքականությունից «բեխաբար» մեկը, եթե համեմատելու լինենք հսկայական փորձ ունեցող Էդվարդ Նալբանդյանի հետ: Կարդանք Էդվարդ Նալբանդյանի մասին այս համառոտ տեղեկանքը. «1978-1983 թթ. - Լիբանանում ԽՍՀՄ դեսպանություն, 1983-1986 թթ. - ԽՍՀՄ ԱԳ նախարարություն, 1986-1992 թթ. - Եգիպտոսում ԽՍՀՄ, ապա՝ Ռուսաստանի դեսպանության խորհրդական, 1992-1993 թթ. - Եգիպտոսում Հայաստանի գործերի հավատարմատար, 1994-1998 թթ. - Եգիպտոսում ՀՀ դեսպան, Մարոկկոյում եւ Օմանում ՀՀ դեսպան, 1999-14 ապրիլի 2008 թթ. - Ֆրանսիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան, 2000-14 ապրիլի 2008 թթ. - Իսրայելում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Փարիզ), 2001-2008 թթ. - Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Փարիզ), 2004-2008 թթ. - Անդորրայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Փարիզ), 2006-2008 թթ. - Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում ՀՀ նախագահի անձնական ներկայացուցիչ, 2008 թ. ապրիլի 15-ից մինչեւ 2018-ի մայիսը - ՀՀ ԱԳ նախարար»:

Իսկ հիմա ինձ ասեք, թե ով էր Արարատ Միրզոյանը՝ մինչեւ ՀՀ ԱԳ նախարար դառնալը, դիվանագիտական աշխատանքի ինչ փորձ ուներ, որ ես, օրինակ, Պրահայում Արցախն Ադրբեջանի մաս ճանաչելու համար պահանջեմ ոչ թե Նիկոլի, այլ իր հրաժարականը: Մարդիկ կխնդան, չէ՞, վրաս, կասեն՝ արտգործնախարար ես գտել՝ հրաժարական ես պահանջում: ՔՊ-ն էլ սրան վերցրել, ուղարկել է բանավեճի, որ տեսնողներն ասեն՝ Նիկոլն էլ նախրում էշ ունի:

Բանավեճը տեսաք: Արարատ Միրզոյանի պարագայում ամենափայլուն բանը նրա դոշի քարտեզն էր: Իրավունք ունե՞ր Միրզոյանն այդ քարտեզով ներկայանալ, եթե հայտնի է, որ այն ամբողջությամբ չի արտացոլում երկրի սահմանները: Նիկոլը կարող է նման քարտեզ կպցնել դոշին, Ալեն Սիմոնյանը, սրանք քաղաքականությունից ոչինչ չեն հասկանում, չեն էլ պատկերացնում, թե դա ինչ մեսիջներ է փոխանցում մեր լավը չուզող պետությունների ղեկավարներին: Նրանց թվում է՝ դա խաղաղության քարտեզ է: Իսկ ինչո՞ւ է Արարատ Միրզոյանն այդ քարտեզով շրջում աշխարհով մեկ, ի՞նչ է ուզում ասել աշխարհին՝ որպես ՀՀ արտգործնախարար: Ճ՞ պետք է հիշեցնեմ Միրզոյանին, որ քաղաքականությունը հնարավորությունների արվեստ է, որ հնարավոր է ճիշտ քաղաքականություն վարելով միանգամայն այլ երկիր եւ այլ քարտեզ ունենալ: Վարել ենք, չէ՞, այդպիսի քաղաքականություն, ունեցել ենք, չէ՞, ավելի լավ երկիր, ավելի հզոր Հայաստան, քան այդ քարտեզում պատկերվածն է: Այսքանը՝ տեսողական իմաստով:

Իսկ ի՞նչ էր դայլայլում Արարատ Միրզոյանը բանավեճի ժամանակ: Մի բառով բնութագրեմ խոսքը՝ ապուշություն: Իսկ եթե ավելի հիմնավոր՝ կարող եմ ասել, որ արտաքին քաղաքականության մասին Արարատ Միրզոյանի ճոճողոցները մեկին մեկ կրկնում էին Փաշինյանի ճոճողոցները: Այսինքն, բանավեճի ժամանակ մի դատարկություն էր այնտեղ կանգնած, որն իր ներկայությամբ ուղղակի փաստում էր ՀՀ արտաքին քաղաքական օրակարգի բացակայությունը: Պաշտպանության նախկին փոխնախարար Արտակ Զաքարյանն է լավ ասել. «Որեւէ հարցի չտրվեց փաստարկված եւ ըստ էության պատասխան: Հստակ երեւաց, որ չկա արտաքին քաղաքական օրակարգ: Չունեն ազգային անվտանգության ռազմավարություն: Չունեն արտաքին քաղաքականության սկզբունք ու առաջնահերթություններ: Առաջիկա ռեգիոնալ եւ գլոբալ զարգացումների մասին չունեն տարրական պատկերացումներ: Տեղյակ չէր անգամ, թե ինչ հիմնական սպառնալիքներ են ամրագրված ՀՀ արտաքին հետախուզության ծառայության զեկույցում: Չկար հոդաբաշխ բացատրություն անվտանգության եւ խաղաղության, արտաքին ու ներքին երաշխիքների, ինչպես նաեւ՝ անվտանգության այլ կենսական բաղադրիչների մասին: Ոչ մի խոսք էներգետիկ, պարենային, կոմունիկացիոն, տեղեկատվական եւ տնտեսական անվտանգության մասին: ՀՀ ԱԳՆ «ղեկավարի» պատասխաններն ու հարցերը վկայում են գործող կառավարիչների ռազմավարական մտածողության իսպառ բացակայության մասին»: Ավելացնելու ոչինչ չունեմ:

Հիմա մտածում եմ՝ ո՞ւմ հրաժարականը պահանջեմ՝ Արարատ Միրզոյանի՞, թե՞ Նիկոլի: Երեւի՝ ամեն դեպքում՝ Նիկոլի, որովհետեւ Միրզոյանի հրաժարականը կարող է պարզապես աննկատ մնալ: Նիկոլի կյանքում մի 0 ավել, մի 0 պակաս՝ ի՞նչ է փոխվելու: Բայց որ Նիկոլը գնաց՝ Արարատ Միրզոյանի նման բոլոր 0-ներին է հետը տանելու:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԻՆՉ ՃԱԿԱՏԱԳԻՐ Է ՍՊԱՌՆՈՒՄ ՀԱՅ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ

Ի՞նչ պետք է անեն այն հայ ֆերմերները, որոնք կորցնում են իրենց ապրանքի իրացման շուկան: Փաշինյանն առաջարկում է նոր շուկա գտնելը. աշխարհում բացի ռուսականից 7 միլիարդանոց շուկա կա, բայց նույն տրամաբանությամբ՝ աշխարհում 200-ին մոտ երկիր կա, ինքն ինչո՞ւ է Հայաստանի վարչապետի պաշտոնը բռնազավթած պահում, թող փորձի որեւէ այլ երկրում գունավոր հեղաշրջում անել, մի քանի տարի էլ այդ երկրում վարչապետ աշխատի, եթե, իհարկե, անմիջապես չտեղափոխեն համապատասխան մասնագիտացված բուժհաստատություն: Բայց հիմա խոսքը հայ ֆերմերների մասին է. եթե Փաշինյանին հաջողվի կրկին բռնազավթել իշխանությունը, ի՞նչ է սպասվում հայ ֆերմերներին, Հայաստանում մոտ 300 հազար գյուղացիական տնտեսություն կա: Սա շատ կարեւոր է, քանի որ մարդիկ պետք է հասկանան, թե ինչ ապագա է իրենց սպասվում, չնայած նրանց մի մասը երեւի գլխի է ընկնում:

Այս հարցի պատասխանը շատ պարզ է, գոնե նրանց 90 տոկոսը սնանկանալու է, Հայաստանի ո՛չ ելակը, ո՛չ ծաղիկը, ո՛չ լոլիկը եւ ո՛չ էլ պղպեղը որեւէ եվրոպական շուկայում պահանջարկ չի ունենալու, չեն էլ թողնելու, որ դրանք այնտեղ մուտք գործեն, ԵՄ չափանիշներն անհամեմատ ավելի խիստ են, ճանապարհը՝ երկար ու ծախսատար: ԵՄ-ն կարող է ինչ-որ ֆինանսական աջակցություն տրամադրել, բայց այդ գումարը նստելու է ԵՄ եւ ՀՀ չինովնիկների հաշիվներին՝ հայ գյուղացուն չի հասնելու: Սնանկացած մարդկանց մի մասն արտագաղթելու է կամ, ինչպես ասում են պրոնիկոլական ակտիվիստները՝ «ա..ր» են լինելու Հայաստանից, քանի որ իրենց բողոքով, իրենց խնդիրները բարձրաձայնելով վնասում են իրենց արժանապատվությանը: Սրանց ընկալմամբ՝ արժանապատվությունն այն է, երբ դու ստրկական հնազանդությամբ ենթարկվում ես տերերի կողմից քեզ բերված բոլոր փորձություններին: Ամեն մեկն արժանապատվության իր ընկալումն ունի:

Եթե Հայաստանում արտադրված ապրանքը չի արտահանվում, ապա տեղի է ունենալու գերարտադրություն, երկրի պահանջարկն ավելի փոքր է, քան ներքին արտադրությունը: Հայաստանի բնակչությունը չի կարող այդքան ելակ, պոմիդոր կամ պղպեղ սպառել, որքան արտադրվում է: Որոշ թաքնված պրոհիշխանական քարոզչիչներ առաջարկում են սառեցնել արտադրված ապրանքը կամ մուրաբա եփել, բայց թե հետո ում է պետք այդ ելակի, ծիրանի, կեռասի կամ չվաճառված վարդերից մուրաբան, ոչ մեկը չգիտի: Ես ավելի մարդասիրական տարբերակ ունեմ՝ Ռուսաստան չարտահանվող ապրանքը կարելի է փորձել վաճառել այլմոլորակայիններին: Սա ավելի մարդասիրական է, քանի որ մարդուն չես ստիպում իր չիրացված ապրանքի վրա մի հատ էլ նոր ծախս անել եւ մտածել, թե այդ ապրանքն ինչ անի:

Իրականում, աշխատանքը կորցրած եւ աղքատության դատապարտված հայ գյուղացին մի բան կարող է անել՝ դառնալ վարձու աշխատող, բատրակ՝ թուրքական ֆերմերների մոտ: Այն, ինչ հիմա տեղի է ունենում Հայաստանում, միանգամայն տեղավորվում է Փաշինյանի սցենարի մեջ. նա աղքատացնում եւ սնանկացնում է հայ գյուղացուն, որը կպած է իր հողին եւ իր տնտեսությանը: Նրանց այդ հողից կարելի է կտրել միայն եկամտից զրկելով եւ սնանկացնելով: Եթե Հայաստանում հողը եկամուտ չտա, հողագործությունը չկերակրի այն մշակողին, մարդիկ մասսայաբար հրաժարվելու են հող մշակելուց եւ լքելու են իրենց գյուղերը: Այդպես արդեն մի անգամ եղել է 90-ականների սկզբին, երբ շատ հողագործներ բռնեցին արտագաղթի ճանապարհը: Հայաստանն ադրբեջանցիներին եւ թուրքերին հանձնելու համար նախ պետք է Հայաստանի հողն ու գյուղերն ազատել հայ մարդուց, դրա համար էր Փաշինյանը խոսում այն մասին, որ Հայաստանում երբեք հայերը մեծամասնություն չեն եղել: Առավել հարուստ ֆերմերները, գործարարները, արժանապատիվները, բնական է՝ չեն համակերպվելու թուրքական տիրապետության տակ ապրելու պարտադրանքին եւ գնալու են հիմնականում Ռուսաստան, այլ տեղ ուղղակի չկա: Նրանք, ովքեր մնալու են, թուրք ֆերմերների մոտ վարձվելու են, որ իրենց գոյությունը պահպանեն:

Հարց է առաջանում. այդ դեպքում ինչո՞ւ է Ռուսաստանը նման քայլերի գնում, ինչո՞ւ է օգնում գործող ռեժիմին՝ Հայաստանը հայերից մաքրելու եւ թուրքերով բնակեցնելու հարցում: Չի բացառվում, որ Ռուսաստանը համակերպվել է Հայաստանի կորստի փաստի հետ եւ որոշել է ինքն էլ իր բաժինը պոկել կործանվող Հայաստանից, իսկ այդ բաժինն աշխատող եւ արարող հայ գյուղացիներն են: Վերջին տասնամյակում Հայաստանից Ռուսաստան արտագաղթած հազարավոր հայ գյուղացիներ Կրասնոդարի, Ռոստովի, Ստավրոպոլի երկրամասերում հազարավոր հեկտարներով հող են մշակում՝ խաղողի եւ մրգատու այգիներ են հիմնել, ջերմատներ կառուցել, գինու, կոնյակի արտադրություններ հիմնել: Հիմա, եթե հաջողվի մի քանի տասնյակ հազար մարդ էլ տեղափոխել ՌԴ, Ռուսաստանը կունենա ոչ միայն Հայաստանից արտահանվող ապրանքների սեփական արտադրություն, այլեւ կարիք չի ունենա Ուզբեկստանից կամ Տաջիկստանից ապրանք ներմուծել: Այնպես որ, Հայաստանի փրկությունն առաջին հերթին մեզ՝ հայերիս է պետք, թե չէ կործանվող երկրից ամեն մեկը փորձելու է իր բաժինը պոկել եւ ոչ թե օգնել կործանումից փրկելուն:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՆՎԱՑԻ, ԵԹԵ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ ՀՐԱԺԱՐՎԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՅԼ ԵՐԿՐԻ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄՏՔԻՑ

*«Հրապարակի» զրուցակիցը տնտեսագետ **Սուրեն Պարսյանն** է:*

- Գյուղմթերք, ձուկ, ալկոհոլային խմիչքներ, ծաղիկներ... Ռուսաստան մեկնող հայկական արտադրանքի սահմանափակումների ցանկն օրեցօր մեծանում է: Սա արդեն լուրջ դժգոհություն է հարուցել ՀՀ տնտեսվարողների շրջանում, բայց՝ ո՛չ կառավարությունում: Ավելին, Փաշինյանը հայտարարում է, թե հայկական արտադրանքը կառաքվի եվրոպական շուկա, ինքը փոխհատուցումներ կտա եւ գիտի, թե ինչպես հարստացնել Հայաստանը:

- Տնտեսական հարաբերություններում քաղաքական գործոնը միշտ էլ կարեւոր դեր է խաղացել, հատկապես՝ այնպիսի երկրների միջեւ, որոնք ունեն խոր տնտեսական ինտեգրում: Եթե Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ քաղաքական տարաձայնությունները խորանան, ապա դրանց տնտեսական հետեւանքներն առաջին հերթին զգալու են տնտեսվարողները: Գյուղմթերքի, ձկնարտադրության, ալկոհոլային խմիչքների եւ այլ ապրանքների արտահանման սահմանափակումները հարվածում են հատկապես այն ոլորտներին, որոնք տարիներ շարունակ ուղղված են եղել ռուսական շուկային: Միաժամանակ, պետք է արձանագրել, որ Հայաստանի տնտեսության համար շուկաների դիվերսիֆիկացումը ռազմավարական անհրաժեշտություն է: Սակայն այլընտրանքային շուկաների ձեւավորումը երկարաժամկետ գործընթաց է եւ չի կարող կարճ ժամանակում ամբողջությամբ փոխարինել ռուսական շուկայի ծավալներին: Հետեւաբար, տնտեսական ռիսկերի կառավարումը պահանջում է ոչ թե հայտարարություններ, այլ հստակ ծրագրեր եւ անցումային մեխանիզմներ:

- Պուտինը հայտարարել է, որ ԵԱՏՄ-ից դուրս գալու դեպքում ՀՀ-ն ազատ առեւտրի համաձայնագրերից չի օգտվի այլեւս, կդադարեցնեն Երեւանի հետ ինտեգրացիոն գործընթացներին վերաբերող աշխատանքը, էներգակիրների գների աճը կհանգեցնի ՀՀ ՀՆԱ-ի առնվազն 14 տոկոսի կորստին, խնդիրներ կունենան նաեւ ՌԴ-ում աշխատող մեր հայրենակիցները: Փաստորեն, «նշան բռնելով Փաշինյանի վրա»՝ ակամայից «վնասում են» ՀՀ քաղաքացուն:

- Եթե Հայաստանը հրաժարվի ԵԱՏՄ անդամակցությունից, ապա անխուսափելիորեն կվերանայվեն այն արտոնյալ պայմանները, որոնցից օգտվում են հայկական ընկերությունները եւ քաղաքացիները: Խոսքը վերաբերում է ոչ միայն ապրանքների ազատ տեղաշարժին, այլեւ աշխատուժի, կապիտալի եւ ծառայությունների ազատ շրջանառությանը: Միեւնույն ժամանակ, տնտեսական գնահատականները պետք է դիտարկել ոչ թե քաղաքական հայտարարությունների, այլ կոնկրետ հաշվարկների հիման վրա: Ցանկացած փոփոխություն առաջին հերթին ազդեցություն կունենա Հայաստանի քաղաքացիների, բիզնեսի եւ աշխատողների վրա: Այդ պատճառով անհրաժեշտ է խուսափել այն իրավիճակից, երբ քաղաքական հակասությունների գինը վճարում է հասարակությունը:

- ՌԴ-ում հանգիստ են՝ հայկական ապրանքների մատակարարման սահմանափակումները բացասաբար չեն ազդի իրենց երկրի տնտեսության վրա, քանի որ իրենց պահանջարկի մեծ մասը բավարարում են սեփական արտադրության միջոցով: Նշում են, որ հայկական ծիրանը, բալը կփոխարինեն թուրքականով, ադրբեջանականով եւ այլն: Իսկապե՞ս ոչինչ չեն կորցնի հայկական արտադրանքի ներկրումն արգելափակելով:

- Օբյեկտիվորեն՝ հայկական արտադրանքը ռուսական տնտեսության ընդհանուր ծավալների մեջ մեծ մասնաբաժին չի զբաղեցնում: Հետեւաբար, որոշ ապրանքների ներմուծման սահմանափակումը ՌԴ մակրոտնտեսական ցուցանիշների վրա էական ազդեցություն չի ունենա: Սակայն դա չի նշանակում, որ հայկական արտադրանքը ռուսական շուկայում արժեք չունի: Հայկական կոնյակները, գինիները, պահածոները, մրգերն ու ծաղիկները զբաղեցնում են որոշակի սպառողական հատվածներ եւ ունեն իրենց հավատարիմ գնորդը: Այսինքն՝ Ռուսաստանի տնտեսությունը մեծ կորուստներ չի կրի, սակայն առանձին բիզնեսներ եւ սպառողներ կարող են զգալ այդ բացը: Հայաստանի համար, սակայն, ազդեցությունն անհամեմատ ավելի զգալի է, քանի որ արտահանման զգալի մասը կենտրոնացած է հենց այդ շուկայում:

- Մոսկվան զգուշացնում է՝ ԵԱՏՄ-ից դուրս գալու դեպքում գազի սակագինը քառակի կթանկանա: ՌԴ փոխվարչապետն էլ համոզված է՝ ՀՀ-ն բացի ռուսականից այլ գազ չի ստանա. հարցն այն է՝ ո՞ր երկրի միջոցով եւ որքա՞ն թանկ: Տնտեսական հետեւանքների մեջ գազի թանկացման թեման թերեւս ամենազգայունն է. ինչպե՞ս կանխել սոցիալական ծանր հարվածը:

- Գազի գնի փոփոխությունը Հայաստանի տնտեսության համար ամենազգայուն հարցերից է, քանի որ այն անմիջական ազդեցություն ունի թե՛ բնակչության սոցիալական վիճակի, թե՛ արտադրական ծախսերի վրա: Գազի թանկացումը սովորաբար փոխանցվում է նաեւ էլեկտրաէներգիայի, տրանսպորտի, գյուղատնտեսության եւ մի շարք ապրանքների ինքնարժեքին: Այս ռիսկը մեղմելու համար անհրաժեշտ է միաժամանակ աշխատել մի քանի ուղղությամբ՝ բարձրացնել էներգաարդյունավետությունը, զարգացնել վերականգնվող էներգետիկան, նվազեցնել էներգակիրների կորուստները եւ սոցիալական աջակցություն տրամադրել առավել խոցելի խմբերին: Սակայն կարճաժամկետ հեռանկարում Հայաստանի համար ռուսական գազին լիարժեք այլընտրանք գտնելը բավականին բարդ եւ ծախսատար խնդիր է:

- ԵԱՏՄ վերջին գագաթնաժողովում Հայաստանի հարցը քննարկման դրվեց ամենաբարձր մակարդակով, կոչ արեցին՝ սեղմ ժամկետում հանրաքվե անցկացնել ԵՄ-ԵԱՏՄ նախընտրության հարցով: Փաշինյանը հակադարձում է՝ կմնանք ԵԱՏՄ-ում այնքան ժամանակ, քանի դեռ դա ԵՄ-ին միանալու օրակարգին չի հակասում: Ի վերջո, ո՞ւր կտանի սանկցիաներով ուղեկցվող ՌԴ-ՀՀ քաղաքական «առճակատումը»:

- Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ տնտեսական կապերը ձեւավորվել են տասնամյակների ընթացքում, եւ դրանց կտրուկ վերափոխումը հնարավոր չէ իրականացնել առանց տնտեսական կորուստների: Միեւնույն ժամանակ, Հայաստանը փորձում է ընդլայնել համագործակցությունը նաեւ Եվրամիության եւ այլ գործընկերների հետ, ինչը բնական գործընթաց է փոքր եւ բաց տնտեսության համար: Ամենայն հավանականությամբ, առաջիկա շրջանում կողմերը կփորձեն պահպանել տնտեսական համագործակցության նվազագույն մակարդակը՝ անկախ քաղաքական տարաձայնություններից: Սակայն եթե քաղաքական լարվածությունը շարունակաբար աճի, տնտեսական սահմանափակումների ռիսկը կմնա բարձր: Այդ պայմաններում Հայաստանի հիմնական խնդիրը պետք է լինի արտաքին տնտեսական կախվածությունների աստիճանական նվազեցումը եւ նոր շուկաների ու ներդրումային ուղղությունների զարգացումը՝ տնտեսության համար առանց կտրուկ ցնցումների: Ըստ իս՝ քաղաքական լարվածությունը կարող է նվազել, եթե հայկական կողմը հրաժարվի հայկական երկաթուղու կառավարումն այլ երկրի փոխանցելու գաղափարից, կամ, փոխադարձ շահով պայմանավորված, նոր քաղաքական որոշում կայացվի:

Արա ԱԼՈՅԱՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԴԵԿՈՐ՝ ՄԱՐՏԻ 1-Ի ԳՈՐԾԻ ՏԵՍՔՈՎ

Որքան ավելի են մոտենում ընտրությունները, այնքան ավելի հաճախ է իշխանությունը հիշում Մարտի 1-ի մասին եւ անգամ փորձում բացահայտման պատրանք ստեղծել: Ոստիկանության պետի նախկին տեղակալ Սաշա Աֆյանի գործով, որը Մարտի 1-ի գործով վերջերս մեղադրվեց պաշտոնեական լիազորություններն անցնելու, ցուցարարներին բռնությունների ենթարկելու համար, դեռ դատական քննություն է ընթանում: Դատարանում միջնորդություն էր ներկայացվել՝ Մարտի 1-ի գործով ապօրինի դատապարտված, իսկ հետագայում արդարացված, 2024 թվականին մահացած՝ Քրեակատարողական վարչության նախկին պետ Մուշեղ Սաղաթելյանի որդուն ճանաչել տուժող: Դատարանը միջնորդությունը բավարարել է: Եվ ահա՝ այս փոքր ընթացակարգային որոշումը դատախազությունը հատուկ լուսաբանում է եւ հիշեցնում նախապատմությունը. 20 թվականին՝ նույն նիկոլական իշխանության օրոք, Աֆյանին արդարացրել էին, իսկ մոտ մեկ տարի առաջ Աննա Վարդապետյանը վերացրել է Սաշա Աֆյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը, կրկին քննություն իրականացրել եւ ուղարկել դատարան: Այստեղ վիպասանը կասեր՝ եւ անցավ մեկ տարի: Մեկ տարի պահանջվեց, որ Սաղաթելյանի որդուն տուժողի իրավահաջորդ ճանաչեն ու այս մասին մի խառը հաղորդագրություն տարածեն՝ գործը բացահայտելու ցանկության իմիտացիա ստեղծելով:

«Բացահայտող էիք՝ Մուշեղ Սաղաթելյանի կենդանության օրոք բացահայտեիք: Նա շատ բաներից տեղյակ էր: Զբաղված են մարդկանց անունը շահարկելով ինֆորմացիոն ֆոն ստեղծելու ջանքերով»,- ասում է ԲՀԿ պատգամավորության թեկնածու, քաղաքագետ **Սուրեն Սուրենյանցը**, որը Մուշեղ Սաղաթելյանի ընկերն է եղել եւ, ինչպես Սաղաթելյանը, Մարտի 1-ի գործով ազատազրկվածներից է: Նա վստահ է, որ եթե երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընտրական գործընթացի սուբյեկտ չլիներ, Մարտի 1-ի գործի շուրջ ինֆորմացիա չէր լինի: «Նիկոլ Փաշինյանը բացառապես իր քաղաքական մերկանտիլ օրակարգը սպասարկելու խնդիր ունի, ոչ ավելի»,- ասում է Սուրենյանցը:

Ըստ նրա, հենց Փաշինյանն է վիժեցրել Մարտի 1-ի գործի բացահայտումը: «Փաշինյանի թյունինգ արած ՍԴ-ն էր, որն ըստ էության արդարացրեց Ռոբերտ Քոչարյանին, եւ այդ պահից սկսած՝ Մարտի 1-ի գործի բացահայտման բոլոր հեռանկարներն ի դերեւ եղան: Նախ՝ որովհետեւ իշխանությունը կորցրեց այն բացահայտելու բարոյական, իրավական եւ քաղաքական լեգիտիմությունը, որովհետեւ ՍԴ վճռից հետո նոր իրավիճակ ստեղծվեց: Եվ երկրորդ. չեմ հասկանում, թե ոնց են պատասխանատվության ինստիտուտը գործի դնելու, եթե վաղեմության բոլոր ժամկետներն անցած են: Երրորդն էլ՝ ինչպես Փաշինյանի բոլոր գործողությունները, այնպես էլ սա, տեղավորվում է նախընտրական դեկորացիայի մեջ, ու ընտրական կամպանիայի ավարտից անմիջապես հետո Նիկոլ Փաշինյանը թե՛ Մարտի 1-ն է մոռանալու, թե՛ մի շարք այլ բաներ, որոնց շուրջ հիմա աղմուկ է բարձրացնում»:

8 տարվա իշխանությունը երբ նույն հորթային հրճվանքով խոստանում է այն, ինչ խոստացել է 2018-ին՝ բացահայտել Մարտի 1-ի գործը, սա միայն ծիծաղ կարող է առաջացնել: Մարտի 1-ի բացահայտումը կարեւոր չէ՞: «Այդ կարգի բացահայտումներն արժեք ունեն միայն թարմ հետքերով, օպերատիվ կարգով: Մարտի 1-ը զգայուն ու ցավոտ իրադարձություն է, որպես մասնակից, որպես այդ իրադարձությունների արդյունքում ազատազրկված եմ դա ասում, բայց դա ներքաղաքական կյանքին վերաբերող դրվագ է: 44-օրյա պատերազմը, Արցախի կորուստն այնպես շուռ տվեցին ամեն ինչ գլխիվայր, որ հիմա հաստատապես Մարտի 1-ը՝ իր ամբողջ ողբերգականությամբ ու հետեւանքներով, այլեւս ակտուալ չէ: Լավ կլիներ, որ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրվեին իրական հարթության վրա, հասկանային՝ ով ու ինչու կործանեց Արցախը, եւ ես կարծում եմ, որ հայրենիքի գողերը որեւէ իրավունք չունեն նախկինում կատարված որեւէ հանցագործություն բացահայտելու: Կգա մաքուր իշխանություն եւ այդ ամենով զբաղվելու իրավունք ու հնարավորություն կունենա»,- նկատեց քաղաքագետը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԻՐԱՎՈՒՆՔ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՉ ՄԻԱՅՆ ԱՌԱՋԱՏԱՐՆ Է, ԱՅԼԵՎ ԱՌԱՅԺՄ ՄԻԱԿՆ ՈՒ ԱՆԿՐԿՆԵԼԻՆ

Հնձ ծանոթ իրավաբանին խնդրեցի պատասխանել. «Ընտրարշավի ընթացքում իրավական ինչ «շեղումներ, զեղումներ, խեղումներ» է նկատել: Գաղտնալսումների մասին ինչ կասի»: Նա սիրով պատասխանեց հարցերիս, բայց վերջում խնդրեց անունը չհրապարակել: Մարդիկ տարօրինակ վախեր ունեն, բայց մենք ստիպված ենք ընդառաջել այդ խնդրանքին:

Ներկայացնում ենք մեր զրուցակցի խոսքը:

«Գաղտնալսելու իրավունք ոչ միայն չունեն, այլեւ օրենքով սահմանված կարգից ու ձեւակերպումներից դուրս իրականացված գաղտնալսումը քրեորեն հետապնդելի, այսինքն՝ օրենքով արգելված արարք է: Գաղտնալսում կարող է կատարվել միայն քրեական վարույթի (քրեական գործի) շրջանակում եւ բացառապես այն դեպքում, երբ առկա է դատարանի որոշում տվյալ անձի (անձանց) խոսակցությունները, այդ թվում՝ հեռախոսային, գաղտնալսելու թույլտվության մասին: Առանց դատարանի համապատասխան որոշման իրականացված գաղտնալսումը որեւէ իրավական ուժ չունի, դրա արդյունքում ձեռք բերված տվյալները չեն կարող ապացույց համարվել կամ դրվել ապացույցների հիմքում: Ավելին, նման գաղտնալսումն ինքնին քրեորեն հետապնդելի արարք է: Ասածս, իհարկե, վերաբերում է օրենքի եւ իրավունքի գերակայությունը քիչ թե շատ ընդունող, հարգող ու պահպանող երկրներին: Եթե երկրի վարչապետը շրջափակում է դատարանները, կաթվածահար է անում դրանց գործունեությունը եւ հայտարարում. «Հայաստանում կմ մի դատավոր, որն իմ ասածը չանի», իսկ դրան, բացառությամբ եզակի մի դատավորի (Ալեքսանդր Ազարյան), որեւէ բացասական արձագանք չի հետեւում, նման երկրի իրավական համակարգից կամ իրավական մարմինների գործունեությունից ինչ սպասես:

Ինչ վերաբերում է Անդրանիկ Թեւանյանի կողմից, ոչ ավել, ոչ պակաս, այսպես կոչված՝ «դավաճանություն» կատարած լինելուն, ապա նույնիսկ իմ մասնագիտական պատվից ցածր եմ համարում դրա քննարկումը: Միայն նշեմ, որ այնտեղ երկու զավեշտ միաժամանակ մեկտեղված է, ինչը քիչ դեպքերում է լինում: Առաջին. այդ ինչպես, ինչ խողովակներով ու միջոցներով, ինչկերպ եւ ինչու հատկապես այդ «դավաճանության փաստն» առաջինը հայտնի դարձավ Նիկոլ Փաշինյանին: Նա ՀՀ իրավապահ որեւէ մարմնում որեւէ պաշտոն չի զբաղեցնում: Եվ ինչու, ինչ նպատակով այդ փաստը հայտնեց Նիկոլ Փաշինյանը, այն էլ՝ նախընտրական քարոզարշավի ժամանակ: Այդ փաստից կարելի է անել միայն մեկ եզրակացություն. Նիկոլն է որոշում, թե կոնկրետ որ անձի որ արարքն է համարվում հանցագործություն, այդ թվում՝ որ արարքը՝ դավաճանություն, որ դեպքում ինչ վարույթ պետք է հարուցել, որ մարմնի կողմից եւ ինչպիսի շոու կազմակերպել: Իսկ ՀՀ իրավապահ մարմինները, առանց բացառության, հեզաբարո կատարում են տրված ցուցումներն ու հանձնարարությունները՝ քաջ գիտակցելով, որ տվյալ վարույթը (քրեական գործը) վաղ թե ուշ կարճվելու է, երբ իրականացված շոուի անհրաժեշտությունը վերացած լինի: Այս խեղկատակությունն ավելի է զավեշտալի դառնում, երբ «Բարգավաճ Հայաստան»-ի ընտրական ցուցակի 2-րդ համար Անդրանիկ Թեւանյանին ձեռնաշղթաներով դիմավորում ու ձերբակալում են հատուկ ծառայությունների դիմակավորված անձինք: Դրա նպատակը ոչ միայն իրենց գործողություններին խորհրդավոր տեսք հաղորդելն է (իմ շուրջ 40-ամյա աշխատանքային գործունեության ընթացքում նման կերպ վարվել ենք բացառապես զինված բանդաներ կամ ավազակախմբեր վնասազերծելիս), այլեւ հասարակության ցասումից ու արհամարհանքից թաքնվելը, չճանաչվելը: Երկրորդ զավեշտն այն է, որ ԱԺ փակ (բայց ոչ գաղտնի) նիստում տվյալ հարցի քննարկման ժամանակ Անդրանիկ Թեւանյանը չի մասնակցել նիստին, ավելին, ԱԺ այդ փակ նիստի, այսպես կոչված, «պետական գաղտնիք պարունակող» քննարկումն ու ընդունված որոշումը տեղադրված են ՀՀ ԱԺ կայքում: Բայց այս ամենը գրոշի արժեք չունի. եթե ի վերուստ որոշված է, որ Անդրանիկ Թեւանյանը «դավաճանություն» է կատարել, եւ վարույթն իրականացնող քննիչը դա կատարում է, ինչպես պարտավոր է կատարել իր նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնող դատախազի գրավոր ցուցումները:

Իսկ ինչ վերաբերում է նախընտրական քարոզարշավի ժամանակ օգտագործվող բառապաշարին ու դրա թույլատրելիությանը, ապա դրանք վաղուց անցել են թույլատրելիության սահմանները: Եթե գործող վարչապետը ԱԺ նիստում ասում է. «Պետք լինի՝ ուրիշ բան էլ թափ կտամ», կամ նախընտրական քարոզարշավի ժամանակ բարձրախոսով, ի լուր հասարակության, հայտարարում է. «ձեռքները կտրելու եւ մտցնելու եմ իրենց համապատասխան տեղերը», «եթե որեւէ մեկն Արցախի հարցը բարձրացնի, անձամբ ինձ հետ գործ կունենա», «օրինակ, դուք ինչո՞ւ չեք զոհվել» եւ այլն, եւ այլն, էլ ինչ թույլատրելի կամ անթույլատրելի բառապաշարի մասին կարելի է խոսել: Կան նաեւ ավելի կոշտ արտահայտություններ, որոնք թերթում վերաշարադրելն աննպատակահարմար եմ համարում: Ի դեպ, թույլատրելի բառապաշարի մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերություններում՝ ընդհանրապես, եւ նախընտրական քարոզարշավի ժամանակ՝ հատկապես, խաղի կանոնները թելադրում է իշխանությունը: Մեր ներկայիս իրականության մեջ այդ ամբողջը ձեւավորվում ու առաջ է ընթանում իշխանության, այսինքն՝ Նիկոլ Փաշինյանի թելադրած կանոններով՝ դրանից բխող բոլոր կանխատեսելի ու անկանխատեսելի հետեւանքներով:

Հմուտ մանիպուլյատորի, շուրջօրյա եւ շարունակական ստախոսության, հարազատներին միմյանց դեմ լարելու, համախոհներին գժտեցնելու գործում կատարելագործված լինելու առումով Նիկոլ Փաշինյանը համաշխարհային պատմության մեջ ոչ միայն առաջատար է, այլեւ՝ առայժմ միակը, եզակին ու անկրկնելին: Վերջին ութ տարիների ընթացքում Նիկոլի հնարած ու արտաբերած ստերի եւ մանիպուլյացիաների 5 տոկոսը եթե 3-րդ Ռեյխի մեծ գաղափարախոս ու Ադոլֆ Հիտլերի հավատարիմ զինակից Գեբելսն ասած ու արած լիներ, նա հաստատ ամոթից գետինը մտած կլիներ»:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«ՋԵՅՆ ԷՅՐ» ՎԵՊՆ ՈՒ ԴՐԱ ԷԿՐԱՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1847 թվականին հրատարակվել է Շառլոտա Բրոնտեի «Ջեյն Էյր» վեպը, որը համաշխարհային գրականության, նաեւ՝ անգլիական գրականության գլուխգործոցներից է: Դա մի սիրո պատմություն է՝ խոր հոգեբանական եւ սոցիալական շերտերով: Պատմության կենտրոնում կնոջ ճակատագիրն է, որը փորձում է պահպանել մարդկային արժանապատվությունը, ներքին ազատությունն եւ անձնական երջանկություն ունենալու իրավունքը: Գրական այս ստեղծագործությունն ահռելի ազդեցություն է ունեցել համաշխարհային գրականության եւ մշակույթի վրա: Ու ավելի քան հարյուր տարի մասնագետները թե՛ գրքերում եւ թե՛ էկրանին փորձել են ներկայացնել Անգլիայի այդ ժամանակների մռայլ մթնոլորտը, Էդուարդ Ռոչեսթերի դժբախտ կյանքը:

Վեպը գրվել է վիկտորյանական մշակույթի ծաղկման շրջանում: Ուշագրավ է այն, որ առաջին անգամ վեպը լույս է տեսել «Կարեր Բել» տղամարդու կեղծանվամբ ստորագրությամբ, քանի որ 19-րդ դարի կեսերին կին գրողները հաճախ էին բախվում ժամանակի գենդերային նախապաշարումներին, որոնք առկա էին թե՛ գրաքննադատների մոտ, թե՛ հրատարակիչների: Շատ առումներով վեպը կարելի է համարել ինքնակենսագրական: Ջեյն Էյրի՝ խստաբարո միջավայրում անցկացրած մանկությունը գիշերօթիկ դպրոցում Բրոնտեի սեփական փորձառությունն է, որ ունեցել է Քովան-Բրիջի բարեծին օրիորդաց դպրոցում ուսանելու ժամանակ: Բրոնտեն օգտագործել է սեփական ապրումները, որպեսզի ցույց տա կնոջ վիճակն անգլիական այն ժամանակվա հասարակությունում՝ սահմանափակված պայմանականություններով, ոչ իրավահավասար, սահմանափակ հնարավորություններով, տնտեսական կախվածությամբ եւ բարոյական ճնշվածությամբ: Վեպը, կարելի է ասել, հեղափոխական եղավ իր ժամանակի եւ միջավայրի մեջ:

Ջեյն Էյրը, իհարկե, իդեալական գեղեցկությամբ օժտված աղջիկ չէր եւ ոչ էլ վիկտորյանական ժամանակների խոնարհ կին: Նա խելացի էր, անկախ, ի վիճակի՝ բանավիճելու հասարակության եւ նույնիսկ սիրելի մարդու հետ եւ իր խոսքն առաջ տանելու, եթե հատկապես խոսքն ընտրության ազատությանն էր վերաբերում: Անձնական ազատության համար պայքարը, բարոյականության եւ սիրո բալանսավորումը, սոցիալական անհավասարությունն ու դրանից թելադրված պայմանականություններն ու ընկալումները, կարծրատիպերը, վիկտորյանական մռայլ միջավայրն այն հիմնական թեմաներն են, որոնք արծարծվում են վեպում: Ջեյն Էյրի կերպարը համաշխարհային գրականության մեջ կանացի ամենահայտնի կերպարներից է: Նա ռոմանտիկ ավանդույթին հետեւող հերոս չէ, եւ փրկությունը նրա համար դրսից չի գալիս: Նրա ուժը նրա բարոյական անկախության, ինքնագլխության եւ արժանապատվությունը նույնիսկ ամենածանր պահերին պահպանել կարողանալու մեջ է: Երբեմն վեպը համարվում է նաեւ ֆեմինիստական գրականության «ծիծեռնակ»: Բրոնտեն, իհարկե, այդպիսի տերմինաբանությամբ չի առաջնորդվել, սակայն նրա հերոսուհին հոգեւոր, մտավոր առումով հաստատվում է որպես տղամարդկանց հետ լիովին իրավահավասար անձ:

Վեպն էկրանավորվել է տասնյակ անգամներ՝ կինոարվեստի արշալույսից սկսած, երբ դեռ տիրապետողը համր կինոն էր: Իհարկե, համր կինոյում հնարավոր չէր արտացոլել Ջեյն Էյրի պատմության ողջ խորությունը, սակայն այդ ժամանակներում արդեն այն հանդիսատեսի համար ամենասիրված մելոդրամատիկ սյուժեներից էր: Ամենահայտնի էկրանավորումներից մեկը 1943 թվականին ռեժիսոր Ռոբերտ Սթիվենսոնի էկրանավորումն է, որտեղ Ջեյն Էյրի դերակատարը Ջոան Ֆոնթեյնն է, իսկ Էդուարդ Ռոչեսթերինը՝ Օրսոն Վելսը: Այն չափազանց մռայլ է ու կրում է ամերիկյան «նուարի» գեղագիտական ազդեցությունը: Վելսի Ռոչեսթերը հիշվում է որպես խստաբարո, առեղծվածային եւ ներքին ողբերգություն ապրող կերպար: BBC-ն բազմաթիվ անգամներ է անդրադարձել այս վեպին, սակայն ամենահայտնի էկրանավորումում գլխավոր դերերում հանդես են գալիս Ռութ Վիլսոնը՝ որպես Ջեյն Էյր, եւ Թոբի Սթիվենսը՝ որպես Էդուարդ Ռոչեսթեր: Այս մեկը բարձր է գնահատվել՝ վեպի հոգեբանական խորքը հիանալի պատկերելու համար:

Մեր օրերում արդեն դասական է համարվում ռեժիսոր Քերի Ֆուկունագայի 2011 թ. էկրանավորումը, որտեղ Ջեյնի դերում հանդես է եկել Միա Վասիկովսկան, իսկ Ռոչեսթերի դերում՝ Մայքլ Ֆասբենդերը: Այստեղ հատկապես շեշտադրված են Ջեյն Էյրի մենակությունը, հոգեբանական վիճակներն ու ապրումները: Շատ քննադատներ կարծում են, որ վեպի ոգեղենությունն ամենաճշգրիտը հենց այս էկրանավորումն է փոխանցում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՖՐԱՆՍԻԱՅԻ «ՎՏԱՆԳԱՎՈՐ» ԾՐԱԳՐԵՐԸ

Ֆրանսիան ձգտում է, որ Հայաստանը վերջնականապես հաստատվի արեւմտամետ դիրքերում: Փարիզը հետախուզական ոլորտում աշխատանքային փորձ ունեցող նոր դեսպան է ուղարկում եւ առաջիկա խորհրդարանական ընտրություններից անմիջապես հետո նախատեսում է իր արտաքին գործերի նախարարի այցը Հայաստան: Այս մասին հաղորդում է ֆրանսիական Intelligence Online լրատուն: «Եթե հունիսի 7-ին Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները հաղթանակ բերեն Ֆրանսիայի ամենամոտ տարածաշրջանային դաշնակից Նիկոլ Փաշինյանին, Փարիզն անվտանգության ոլորտում մի շարք դիվանագիտական քայլեր է նախապատրաստում՝ երկկողմ հարաբերություններն ամրապնդելու համար: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Նոել Բարոյի թիմն այժմ ավարտում է ընտրություններից անմիջապես հետո նախատեսված այցի նախապատրաստական աշխատանքները: Սպասվում է, որ նա կլինի առաջին օտարերկրյա պաշտոնյան, որը կշնորհավորի վարչապետին՝ վերընտրվելու կապակցությամբ»,- նշում է հոդվածի հեղինակ Պիեռ Գաստինոն:

Նրա խոսքով, Հայաստանում Ֆրանսիայի նոր դեսպան Ֆլորիան Էսկուդիեն դեռեւս սպասում է հավատարմագրմանը, սակայն սա ձեւականություն է. «Էսկուդիեն մասնագիտացած է կիբեռանվտանգության եւ ռազմավարական հարցերի մեջ: Նա հայկական հարցերին արդեն անդրադարձել է Ֆրանսիայի պաշտպանության նախարարությունում իր վերջին նշանակման ժամանակ, որտեղ սերտորեն համագործակցել է Ֆրանսիայի արտաքին հետախուզության գործակալության՝ DGSE-ի տնօրեն Նիկոլա Լերների հետ, որն ակտիվորեն ներգրավված է հայկական գործի մեջ»: Ըստ Գաստինոյի՝ անվտանգության ոլորտում աջակցության այս ցուցադրությունը հաջորդում է նախագահ Մակրոնի՝ մայիսի սկզբին Հայաստան կատարած այցին եւ նպատակ ունի ամրապնդել այն համագործակցությունը, որը սկսվել է 2020 թվականին Երեւանի՝ դեպի Արեւմուտք շրջադարձի հետ:

«Արեւմտյան գործընկերների օգնությամբ Հայաստանի կառավարությունը ստեղծել է Արտաքին հետախուզության ծառայություն, որը պետք է ազատ լինի ռուսական ազդեցությունից, որը շարունակում է ուժեղ մնալ երկրի ռազմական եւ անվտանգության շատ մարմիններում: DGSE-ից բացի, Հայաստանի արտաքին հետախուզության ծառայությունը համագործակցություն է հաստատել ֆրանսիական Viginum ծառայության հետ, որը պայքարում է տեղեկատվության մանիպուլյացիայի դեմ»,- ասվում է հոդվածում: «Անվտանգության ոլորտում Ֆրանսիայի հետ համագործակցության վերաբերյալ Հայաստանի խնդրանքները բխում են կապերն ամրապնդելու ցանկությունից: Մինչդեռ Ֆրանսիայի հետաքրքրությունն արտացոլում է իր ազդեցությունը Կրեմլի ծայրամասեր տարածելու ցանկությունը՝ Սկանդինավիայից մինչեւ Կենտրոնական Ասիա: Երեւանը մնում է Փարիզի միակ հուսալի դաշնակիցը Կովկասում. Ադրբեջանի հետ համագործակցությունը սառեցվել է լրտեսության մեղադրանքով Բաքվում բանտարկված Ֆրանսիայի քաղաքացի Մարտին Ռայանի գործի պատճառով, իսկ Վրաստանի հետ հարաբերությունները լուրջ դժվարություններ են ապրում»,- հաղորդում է Intelligence Online-ը:

Հատկանշական է, որ հայաստանյան ընտրությունների նախաշեմին է նման նյութ հրապարակում Intelligence Online-ը, որը հաճախ անվանում են ֆրանսիական հետախուզության խոսափող: Հիշարժան է նաեւ հոդվածագրի անձը. Պիեռ Գաստինոն «Նախագահի լրտեսները» գրքի հեղինակն է: Ակնհայտ է, որ հոդվածի նպատակը Փաշինյանին սատարելն է, բաց ակնարկը, թե Փարիզը «հույսը կապում է նրա հետ», որքան էլ Հայաստանի հետ կապերը ներկայացված են միջպետական ու բարեկամական հարաբերությունների լույսի ներքո: Ուշագրավ է, որ Ֆրանսիան մեր երկիր է ուղարկում ոչ թե դիվանագետի, այլ՝ հետախուզության ոլորտի փորձառու գործչի, ասել է թե՝ Երեւանի հետ կապերը դիտարկում է այդ պրիզմայով, իսկ անվտանգության ոլորտում համագործակցության պնդումներն ընդամենը Փաշինյանի «եվրոպական» անհիրական երազանքի մասն են, որն իսկական մղձավանջ է դառնում հայ ժողովրդի համար: Ավելին, Ֆրանսիան չի թաքցնում, որ ձգտում է Հայաստանի միջոցով կենսագործել իր հակառուսաստանյան ծավալապաշտական նկրտումները:

Կարճ ասած՝ Հայաստանին Հարավային Կովկասում ամենահուսալի դաշնակից անվանելով, Ելիսեյան պալատում այլ՝ «վտանգավոր» ծրագրեր են գեներացնում՝ առանց այն էլ գոյաբանական ու անվտանգային սպառնալիքներ ունեցող Հայաստանը վերածելու Ֆրանսիայի «հետախուզական գործիքի»՝ մի կողմից սադրելով, մեր երկրի դեմ տրամադրելով Փարիզին մշտապես քննադատող եւ հայ ժողովրդին թշնամի համարող Բաքվին, մյուս կողմից՝ մեր ռազմավարական դաշնակից ու բարեկամ պետությանը՝ Ռուսաստանին, որի հետ հարաբերությունները Փաշինյանի մեղքով հասցվել են պատմական վատթարագույն մակարդակին:

Բայց Հայաստանի ու հայի ճակատագիրը չեն կարող, չպետք է որոշեն աշխարհի եւ ոչ մի մայրաքաղաքում՝ Փարիզից մինչեւ Մոսկվա, Վաշինգտոնից մինչեւ Դելլի: Հունիսի 7-ը մեզ համար պետք է դառնա նաեւ արտաքին քաղաքականության նոր հայեցակարգի եւ անվտանգային ռազմավարության կանխորոշման ելակետ:

Արա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 4.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՀԱ՛Մ ԱՐՁԱԿՈՒՐԴՈՒՄ Է, ՀԱ՛Մ ԱՐՁԱԿՈՒՐԴՈՒՄ ՉԷ

Նիկոլ Փաշինյանը, լինելով արձակուրդում՝ նախընտրական քարոզարշավի մեջ, Ագարակում պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին հրահանգեց ծառայությունից ազատել բարձրլեռնային պայմաններում ծառայության պայմաններից դժգոհող քաղաքացուն, որը, հետո պարզվեց՝ չէր էլ ծառայում, զորացրված էր: Արձակուրդում գտնվելով հանդերձ՝ իր պաշտոնից օգտվելու Փաշինյանի օրինակին է հետեւել նրա կուսակից, Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը:

Մայիսի 28-ին Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը «Դիլիջան համայնքի ղեկավարն ընդունել է պատվիրակությունների ներկայացուցիչներին» վերնագրով տեղեկատվություն է տեղադրել. ««Հանրապետություն - 108» խորագրով Դիլիջանում իրականացվող տոնական միջոցառմանը մասնակցելու նպատակով Դիլիջան համայնքում հյուրընկալվել են ՀՀ-ում Սլովակիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանը, Մոլդովայի Հանրապետության Վոդուլ Լուի Վոդե քաղաքի քաղաքապետը, ՌԴ Տվեր քաղաքի պատվիրակությունը, Դիլիջանի քույր քաղաք Պովաժսկա-Բիստրիցայի պատվիրակությունը: Դիլիջանի համայնքապետարանում կայացած պաշտոնական ընդունելությանը ներկա են գտնվել նաեւ արձակագիր, արվեստաբան Սեյրանուհի Գեղամյանը, օպերային երգչուհի, սոպրանո Ստեֆանի Քոչարյանը, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի ռեկտոր, երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հարությունյանը եւ Հայ առաքելական եկեղեցու Տավուշի թեմի Դիլիջանի հոգեւոր հովիվ Տեր Շավարշ քահանա Սիմոնյանը: Հյուրերին ընդունել է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը: Ընդունելությունից հետո հյուրերը մասնակցել են Դիլիջանի ամֆիթատրոնում կայացած «Հանրապետություն - 108» տոնական միջոցառմանը»:

Նյութի տակ հղում կա, որտեղ պետք է ներկայացված լինեին այդ ընդունելության վերաբերյալ լուսանկարներ, սակայն հղումը չի բացվում: 2021 թվականից Դիլիջան համայնքի ղեկավար, ՔՊ-ի Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը մայիսի 7-ին Ֆեյսբուքի իր էջում տեղադրել է մի հայտարարություն. «Դիլիջան համայնքի սիրելի՛ բնակիչներ: Վաղվանից մեկնարկում է ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախընտրական քարոզարշավը, եւ այդ օրերին գտնվելու եմ արձակուրդում՝ քարոզարշավին ակտիվ մասնակցելու եւ իմ աջակցությունը հայտնելու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Հավատում եմ, որ միասին կարող ենք շարունակել կառուցել խաղաղ, անվտանգ եւ զարգացող Հայաստան՝ վստահ քայլերով առաջ շարժվելով դեպի ավելի կայուն ու արժանապատիվ ապագա: Տեր կանգնիր խաղաղությանը»:

Դ. Սարգսյանը մայիսի 7-ից գտնվում է նախընտրական արձակուրդի մեջ, ակտիվ քարոզչություն է կատարում համայնքի բնակավայրերում, ընտրողներին ՔՊ-ի նախընտրական բուկլետները բաժանում: Նրան Դիլիջանի համայնքապետարանում փոխարինում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արման Բազինյանը: Համայնքապետարանի կայքում տեղադրված են Ա. Բազինյանի ընդունած որոշումները: Ինչպես եղավ, որ նախընտրական արձակուրդում գտնվող Դավիթ Սարգսյանը համայնքապետարանում պաշտոնական ընդունելություն է կատարում, շնորհավորական ուղերձներ հղում: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղադրված են Սարգսյանի շնորհավորական ուղերձները մայիսի 28-ի՝ Հայաստանի Առաջին Հանրապետության օրվա, հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am